ČENN
Shaping the Future by Changing Today

ԱՎՍՏՐԻԱՅԻ
ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ՝ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

ԷԿՈԱԿՈՒՄԲԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ



ՆԻԿՈ
ԿԵՑԽՈՎԵԼՈՒ
ԴՊՐՈՑԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿ 2021

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 3
Ի՞ՆՉ ՊԵՏՔ Է ԻՄԱՆԱՔ, ԵԹԵ ՁԵՐ ԴՊՐՈՑԸ ՆԱԽԱԳԾԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՓՈՐՁ ՉՈՒՆԻ 3
ԻՆՉՈՒ՞ ԿԱՅՈՒՆ ՁԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ 4
Ի՞ՆՉ Է ՆՇԱՆԱԿՈՒՄ ԿԱՅՈՒՆ ՁԱՐԳԱՑՈՒՄ 4
ԻՆՉՈՒ՞ Է ՄՐՑԱՆԱԿԸ ԿՈՉՎՈՒՄ ՆԻԿՈ ԿԵՑԽՈՎԵԼՈՒ ԱՆՈՒՆՈՎ 4
ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ 5
ՄՐՑԱՆԱԿՆԵՐԸ 6
ՄՐՑՈՒՅԹԻ ՁԱԶԱՓԸ 8
ԻՆՉՊԵ՞Ս ՄԱՍՆԱՄՑԵԼ 10
ԻՆՉՊԵ՞Ս ՀԱՎԱՔԵԼ <<ՏՆԿԻՆԵՐ>> 12

ԿԱՅՈՒՆ ՁԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ

ՈՉ՝ ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆԸ 13
ՈՉ՝ ՍՈՎԻՆ 16
ԱՌՈՂՋ ԱՊՐԵԼԱԿԵՐՊ և ԲԱՐՕՐՈՒԹՅՈՒՆ 20
ՈՐԱԿՅԱԼ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ 25
ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ 30
ՄԱՔՈՒՐ ՋՈՒՐ և ՍԱՆԻՏԱՐԻԱ 33
ՄԱՏՉԵԼԻ և ՄԱՔՈՒՐ ԷՆԵՐԳԻԱ 36
ԱՐԺԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔ և ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃ 40
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ, ՆՈՐԱՄՈՒԾՈՒԹՅՈՒՆ և ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ 43
ՆՎԱԶ ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ 46
ԿԱՅՈՒՆ ՔԱՂԱՔՆԵՐ և ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐ 50
ԿԱՅՈՒՆ ՍՊԱՌՈՒՄ և ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ 54
ԿԼԻՄԱՏԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆԸ ԴԻՄԱԿԱՅՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ 58
ՕՎԿԻԱՆՈՍ և ԾՎԻ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 61
ԵՐԿՐԱԳՆԴԻ ԷԿՈՀԱՄԱԿԱՐԳԸ 64
ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ, ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆև ՀԶՈՐ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐ 68
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ 72
Ի՞ՆՉ ՆԵՐԲԵՌՆԵԼ ՊՈՐՏԱԼ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐԻ ՀԵՏ ՄԻԱՍԻՆ 75
ՄՐՑՈՒՅԹՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՂԻ ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ 78

Ի՞ՆՉ ՊԵՏՔ ԻՄԱՆԱՆՔ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

22015 թվականին CENN-ի «Անտառի կայուն կառավարում Վրաստանում» նախագծի շրջանակներում ստեղծվեց երիտասարդական բնապահպանական մրցույթ՝ Նիկո Կեցխովելու անվան դպրոցական մրցանակ:

Նախագծին ֆինանսապես աջակցում է Ավստրիայի զարգացման համագործակցությունը / Austrian Development Cooperation :

ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՄԱՄԱՍՆԱԿԻՑՆԵՐՆ ԵՆ.

- Վրաստանի կրթության , գիտության սպորտի և մշակույթի նախարարությունը
- Վրաստանի բնապահպանության և գյուղատնտեսության նախարարությունը
- Վրաստանի խորհրդարանը Հիմնման օրվանից առ այսօր մրցույթին մասնակցել են 1000-ից ավելի դպրոց:

ԻՆՉ ՊԵՏՔ Է ԻՄԱՆԱՔ, ԵԹԵ ՁԵՐ ԴՊՐՈՑԸ ՄՐՑՈՒՅԹԻՆ ՄԱՍՆԱԿՑԼՈՒ ՓՈՐՁ ՉՈՒՆԻ

- Նիկո Կեցխովելու անվան մրցանակը Էկոակումբի մրցույթ է: Փորձը ցույց տվեց, որ նախագիծը տալիս է ոչ միայն աչքի ընկնող ակումբների, առանձին ուսուցիչների և աշակերտների բացահայտման և պարգևատրման հնարավորություն, այլ դպրոցների համար նոր հնարավորությունների, գիտելիք ստանալու և փոխանցելու, անհատական զարգացման և կազմակերպական զարգացման մշտական գործընթաց:

- Մրցույթի գլխավոր արժեքներն են. շրջապատի նկատմամբ պատասխանատու վերաբերմունք, համերաշխություն և համագործակցություն:

- Մրցույթի գլխավոր նպատակն է հստակ ցույց տալ, որ կարող եք սեփական ձեռքերով իրականացնել փոփոխություններ և բարելավել բնական և սոցիալական միջավայրը:

ՆԻԿՈ ԿԵՑԽՈՎԵԼՈՒ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿ 2021 - ՎՐԹՈՒԹՅԱՄԲ՝ ԿՅՈՒՆ ՇՐՋԱՊԱՏԱՆ ՀԱՄԱՐ, ԷԿՈԱԿՈՒՄԲԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԻՆՉՈ՞Ւ ԵՆ ԿԱՐԵՒՈՐ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ:

- Կայուն «զարգացման նպատակները 17 նպատակի և 169 ստուգիչի հավաքածու է, որոնց հետ համաձայն են ՄԱԿ-ի անդամ բոլոր պետությունները՝ առավել լավ ու կայուն ապագայի հասնելու համար:
  Այս նպատակները վերաբերում են մեր առջև դրված ժամանակակից գլոբալ մարտահրավերներին՝ աղքատության, անհավասարության, բարօրության, խաղաղության և արդարության հարցեր, ինչպես նաև կլիմատի փոփոխության և բնապահպանության հետ կապված հարցեր:
  Այդ պատճառները սերտ կապված են միմյանց հետ, և որպեսզի ոչ ոք հետ չմնա, կարևոր է, որ մինչև 2030 թվականը իրականացվի յուրաքանչյուր նպատակ և ստուգիչ:[1]

- Մեզնից յուրաքանչյուրի անհատական ընտրությունը մեծ ուժ ունի և կարող է նշանակալից ադեցություն գործել տեղական և գլոբալ մարտահրավերների վրա:

Ի՞ՆՉ Է ՆՇԱՆԱԿՈՒՄ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

- «Կայուն զարգացումը պատասխանում է այսօրվա պահանջներին այնպես, որ ապագա սերունդների համար պահպանվի նրանց պահանջների բավարարման հնարավորությունը»:
  Հարլեմ Բրունդտլանդ, 1987 թ.

- «Կայուն զարգացումը ներառում է տնտեսական, սոցիալական և բնապահպանական ասպեկտները:
  Ենթադրվում է, որ զարգացումը պետք է լինի տնտեսապես հարմար, սոցիալական առումով արդար և բնական միջավայրի նկատմամբ՝ խնայողական:[2]

ԻՆՉՈ՞Ւ Է ՄՐՑԱՆԱԿԸ ՆԻԿՈ ԿԵՑԽՈՎԵԼՈՒ ԱՆՎԱՆ

լուսանկար evergreen.tsu.ge

Նիկո Կեցխովելին վրացի գիտնական է, գրող և բուսաբանական դպրոցի հիմնադիրներից մեկը: Նա մեր երկրի բնության յուրահատուկ պաշտպանն է և մեծ բարեկամը:
1917 թվականին Վրաստանի Նիկո Կեցխովելիի անմիջական մասնակցությամբ հիմնվեց Վրաստանի ազգային-դեմոկրատական կուսակցությունը և Նիկոն տարիներ շարունակ եղել է նրա երիտասարդական կազմակերպության առաջնորդներից մեկը:

Նիկո Կեցխովելիի գիտական աշխատությունները վերաբերում են Վրաստանի բուսականության աշխարհագրական, բուսաբանական-աշխարհագրական և համակարգված հետազոտություններին, դրանց վերականգնման և պահպանման խնդիրներին:
Նա բազմաթիվ գրական ակնարկների, նովելների և պատմվածքների հեղինակ է:

Նիկո Կեցխովելու գրքերը Վրաստանի տարբեր անկյուններում ճանապարհորդությունների և հետազոտությունների մասին կարող եք տեսնել մրցույթի կայք էջում:

[1] https://uni.cf/2VgjDH0
[2] www.civiceducation.ge

ՄՐՑՈՒՅԹԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

- Բոլոր գործողությունները, որոնք դուք կիրականացնեք մրցույթի շրջանակներում ի օգուտ բնական և սոցիալական միջավայրի, կգնահատվի «տնկիներ» պայմանական միավորով:

- Քաղաքացիական ակտիվության հանձնարարությունները, գաղափարները տրվում են կայուն զարգացման համար
  յուրաքանչյուր նպատակի համապատասխան: Յուրաքանչյուր ակտիվություն՝ բացի մի քանիսից, գնահատվում է 20 կամ 30 «տնկիներով»: Մանրամասն տեղեկություններ կտեսնեք հաջորդ գլուխներում:

- Դուք սովորում եք, սովորեցնում եք ուրիշներին, իրականացնում եք բնապահպանական և սոցիալական միջոցառումներ, դա հաստատող տեղեկատվությունը վերբեռնում եք մրցույթի Forestry.ge պորտալում և, այդպիսով, հավաքում եք «տնկիներ» էկոակումբի համար: 2021 թ հուլիսին ամենից շատ «տնկիներ » ունեցող էկոակումբների վարկանիշը կհրապարակվի forestry.ge կայքում, իսկ կիսաեզրափակիչ և եզրափակիչ փուլերից հետո կբացահայտվեն երեք հաղթողները և գործընկեր կազմակերպության ընտրած էկոակումբները:

Մենք հավատում ենք, որ Նիկո Կեցխովելու անվան դպրոցի մրցանակի մասնակիցները մեր երկրի ապագան առաջնորդներն են, որոնք կնպաստեն համայնքի զարգացմանն ու փոփոխությունների առավել բարենպաստ միջավայրի ստեղծման համար:

Մրցույթի կայք էջը՝

forestry.ge

Մրցույթի պաշտոնական ֆեյսբուքխումբը՝

ნიკო კეცხოველის სასკოლო პრემიის მონაწილეები

ՆԻԿՈ ԿԵՑԽՈՎԵԼՈՒ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿԻ 2021 - ԿՐԹՈՒԹՅՈՒՆ՝ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ, ԷԿՈԱԿՈՒՄԲԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՄՐՑԱՆԱԿՆԵՐ

2016-2017 մրցութային տարվա հաղթողները ստացան.

- Ժամանակակից էկոհաբեր դպրոցներում: Էկոհաբը դպրոցում ընդհանուր աշխատանքային տարածք է, որը ենթադրում է շրջապատի նկատմամբ հոգատար վերաբերմունք:

ՆԻԿՈ ԿԵՏԽՈՎԵԼՈՒ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿ 2021 - ԿՐԹՈՒԹՅՈՒՆ՝ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ, ԷԿՈԱԿՈՒՄԲԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

2017-2018 մրցութային տարվա հաղթողները ստացան.

- Ուսումնական տուր Ավստրիա և Սլովենիա:

2018-2019 մրցութային տարվա հաղթողները ստացան.

- Ուղեգիր «Կանաչ ճամբար» Էկոակումբի յուրաքանչյուր անդամի համար;
- 7 «Երիտասարդ ռեյնջերների դպրոցի» յոթօրյա ուղեգիր պահպանվող տարածքներ:

2020 թվականին հաղթողները ստացան.

- 8,000, 6,000 և 4,000 լարի դրամաշնորհներ էկոակումբների զարգացման համար:

Միևնույն ժամանակ, ծրագրի շրջանակներում մրցանակներ կստանան մարզի չեմպիոն դպրոցները և տարբեր անվանակարգերում հաղթողները (օրինակ՝ տարվա հայտնագործություն, տարվա լավագույն բնասերը և այլն):

ՆԻԿՈՂ ԿԵՑՈՒՎԵԼՈՒ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿ 2021 - ԿՐԹՈՒԹՅՈՒՆ՝ ԿԱՅՈՒՆ ՇՐՋԱՊԱՏՄԱՆ ՀԱՄԱՐ, ԷԿՈԱԿՈՒՄԲԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՄՐՑՈՒՅԹԻ ՁԵՎԱՉԱՓԸ

Նիկո կեցխովելու դպրոցական մրցույթն ընդգրկում է Վրաստանի բոլոր մարզերը: Մրցույթն անցկացվում է երեք փուլով.

ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼ՝ «ՏՆԿԻՆԵՐԻ» ՀԱՎԱՔՈՒՄ

Պորտալում գրանցվելուց հետո բոլոր էկոակումբները կարող են «տնկիներ» հավաքել իրենց պրոֆիլում:
«Տնկիները» հավաքվում են ձեր նախաձեռնություններին համապատասխան:
Ըստ այդմ յուրաքանչյուր շրջանի առավել ակտիվ և, հետեւաբար, «տնկիների» ամենամեծ քանակ ունեցող դպրոցները անցնում են կիսաեզրափակիչ փուլ:

Դպրոցը, որն ամենից շատ «տնկի» կհավաքի, մեխանիկորեն կանցնի եզրափակիչ: Լավագույն հնգյակը կբացահայտվի ոչ թե շրջանների, այլ ողջ երկրի մասշտաբով:

«Տնկիների» քանակը կբացահայտի նաև մարզի չեմպիոններին (ընդամենը՝ 11 դպրոց ըստ մարզերի), որոնց կտրվեն հատուկ մրցանակներ:

Կիսաեզրափակիչ փուլում էկոակումբների ակտիվությունից ելնելով `հնարավոր է սահմանվի մրցանակներ տարբեր անվանակարգերում հաղթողների համար:

ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼ՝ ԿԻՍԱԵԶՐԱՓԱԿԻՉ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

Այս պահին դուք հնարավորություն ունեք զրուցելու պետական հատվածի և բնապահպանական փորձագետների խմբի աշխատանքի արդյունքների, ձեռք բերած գիտելիքների և փոփոխությունների վերաբերյալ: Ժյուրին ոչ միայն կգնահատի ձեր դպրոցի էկոակումբի ներկայացուցիչին, այլ նաև կտա խորհուրդներ, ինչն աշակերտների համար արժեքավոր
 փորձ կհանդիսանա:

(Մրցույթի համակազմակերպիչներն են ` FAO, WWF Վրաստան, National Geographic Georgia, «Կլիմայի փոփոխությամբ առաջացած աղետների ռիսկի նվազեցում Վրաստանում » յոթամյա նախաձեռնությունը, որն իրականացվում է կլիմայի Կանաչ ֆոնդ (GCF)-ի կողմից, Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության (SDC), Շվեդիայի և Վրաստանի կառավարությունների ֆինանսավորմամբ, ասոցացիա «Սիքա»եվրոպական ֆոնդը, Սաբուկոն և Թբիլիսիի գազանանոցը ...):

ԵՐՐՈՐԴ ՓՈՒԼ՝ ԵԶՐԱՓԱԿԻՉ

Կիսաեզրափակչում լավագույն արդյունքներով դպրոցները, առաջին փուլում ընտրված (ամենաարդյունավետ) 5 դպրոցների հետ միասին կանցնեն վերջին փուլ: Եզրափակիչ փուլում կբացահայտվի Նիկո Կեցխովելու անվան դպրոցի մրցանակակիր 3 դպրոց, ինչպես նաև Ժյուրիի և գործընկեր կազմակերպությունների ընտրյալները:

ՆԻԿՈ ԿԵՑԽՈՎԵԼՈՒ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿ 2021 - ԿՐԹՈՒԹՅՈՒՆ՝ ԿԱՅՈՒՆ ՁԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ, ԷԿՈԱԿՈՒՄԲԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՄՐՑՈՒՅԹԻ ՕՐԱԳԻՐ

«ՏՆԿԻՆԵՐ» ՀԱՎԱՔԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑ.

1 դեկտեմբերի, 2020[3] - 30 հունիս, 2021[4]

.....

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԿԻՍԱԵԶՐԱՓԱԿԻՉ՝

հուլիս-օգոստոս, 2021

.....

ԵԶՐԱՓԱԿԻՉ

28 սեպտեմբերի, 2021

(կանաչ սպառողի օր)

[3] հոկտեմբերի մեկից հետո իրականացված ակտիվությունները:
[4] Պորտալում գրանցման վերջին ժամկետը սահմանափակ չէ, թեև խորհուրդ ենք տալիս չհետաձգել և ժամանակին գրանցվել: Գրանցվելը պարտադիրէ բոլոր դպրոցների համար, ընդ որում՝ նախկին մասնակիցների:

ԻՆՉՊԵ՞Ս ՄԱՍՆԱԿՑԵԼ ՄՐՑՈՒՅԹԻՆ

Նախ, անհրաժեշտ է գրանցվել: Դրանով դուք հաստատեցիք, որ ցանկանում եք. մասնակցել նախագծին:

Ստեղծեք դպրոցական էկոակումբ, որը մրցութային տարվա ընթացքում կգործի մրցույթի շրջանակներում: Ակումբը չպետք է ունենա ավելի քան 10 անդամ (ներառյալ ուսուցիչը):

Վերջում, գրանցման դաշտում մուտքագրեք էկոակումբի անդամների տվյալները:



ՆԻԿՈ ԿԵՑԽՈՎԵԼՈՒ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿ 2021 - ԿՐԹՈՒԹՅՈՒՆ՝ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ, ԷԿՈԱԿՈՒՄԲԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Էկոակումբը կամավորների (աշակերտներ, ուսուցիչներ) թիմ է, որը ստեղծում է կազմակերպչական միավոր, օգնում է դպրոցին և համայնքին հասկանալ կայուն ապրելակերպի կարևորությունը և նվազեցնել շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցությունը: Դպրոցական էկոակումբը, Կարող է ունենալ ընտրված ղեկավար / ղեկավարներ, ունենալ սեփական կանոնադրություն և գործողության պլան: Գործողությունների ծրագրում ցանկալի է նշել, թե ինչ հաճախությամբ են հանդիպում էկոակումբի անդամները :

Ուշադիր ծանոթացեք մրցույթի ուղեցույցին, որտեղ տրված է «տնկիների» հավաքման հնարավորությունները և բերված է կոնկրետ օրինակներ:

Կազմեք թիմ և գրանցվեք հետևյալ պորտալում՝
forestry.ge
Ի նկատի ունեցեք, որ թիմի ղեկավարը անպայման պետք է լինի ուսուցիչ:

Ընտրեք ձեր էկոակումբի կայուն զարգացման հետաքրքիր նպատակը, ծանոթացեք այդ նպատակի վերաբերյալ տեղեկատվությանը և «տնկիներ» հավաքելու հնարավորություններին, ընտրեք համապատասխան ակտիվությունը, սկսեք պլանավորել և իրականացնել:

„«Տնկիներ» ստանալու համար ձեր պրոֆիլից (անհատական պրոֆիլ կունենան բոլոր գրանցված էկոաումբները) համապատախան ֆորմատում ներբեռնեք նյութեր իրականացրած միջոցառումների վերաբերյալ: Մանրամասությունները տրված են հաջորդ ենթագլուխներում:

ԻՆՉՊԵ՞Ս ՀԱՎԱՔԵԼ «ՏՆԿԻՆԵՐ»

Մասնակցելով Նիկո Կեցխովելու դպրոցական մրցույթին, դուք արդեն իսկ դառնում եք կարևոր գլոբալ գործընթացի մաս:

Այս գլխում դուք կծանոթանաք կայուն զարգացման նպատակներին: Ընտրեք ձեզ համար հետաքրքիր նպատակ/նպատակներ, ուսուցչի հետ պլանավորեք, ինչ եք ցանկանում անել և սկսեք «տնկիներ» հավաքել:

Ստորև տրված է կայուն զարգացման յուրաքանչյուրնպատակի վերաբերյալ տեղեկատվություն, այստեղ կծանոթանաք տեղեկատվությանը, թե ինչպես իրականացնել այդ նպատակները և հավաքել «տնկիներ»: Երևի ձեզ էլ է հետաքրքիր իմանալ այն մասին, որ այս գաղափարները պատրաստված են երիտասարդների կողմից՝ երիտասարդների համար՝ - Young Person's Guide Changing The World (AIESEC, Youth4GG and UN Volunteers).

Ծնվեց այնպիսի գաղափար, որն ուղեցույցում նշված չէ՞

Կարող եք ազատ մտածել և այստեղ տրված տեղեկատվությունն ընդունել որպես ճանապարհային քարտեզ և ոգևորության աղբյուր: Կարող եք ուղարկել էկոակումբի ցանկացած ակտիվություն, կարևոր է.

- Համապատասխանի մրցույթի արժեքներին և հիմնավորվի համապատասխան նյութերով:
- Չհակասի COVID-19-ի հետ կապված սահմանափակումներին:
- Ծառայի կայուն զարգացման որևէ նպատակին հասնելուն:

COVID-19-ից խուսափելու նպատակով երկրում պարբերաբար խստանում է կանոնակարգը, չնայած դրան, կրթությունն ու ակտիվությունը կանգ չեն առնում:

Իմացք, որ դպրոցի աշակերտները «ուրբաթ օրվա մարշի» փոխարեն սկսեցին առցանց ընկերություն՝ #ClimateStrikeOnline.

Եթե ցանկանում եք, միշտ կարող եք համատեղել ուսումը և քաղաքացիական ակտիվությունը: Դուք նաև կարող եք հեշտությամբ ստորև նկարագրված ցանկացած գործողություն կատարել առանց ֆիզիկական միջավայրում հավաքվելու: Եթե Ձեզ անհրաժեշտ է օգնություն և խորհուրդ, գրեք տեղական համակարգողի էլեկտրոնային փոստին, կամ՝ **info@cenn.org**-ին, անվան մեջ նշելով՝ Նիկո Կեցխովելու անվան դպրոցաան մրցանակ 2021:

Հիշե՛ք, նախքան հանդիպում / սեմինար կազմակերպելը, անհրաժեշտ է ծանոթանալ ձեր բնակելի տարածքի համապատասխան սահմանափակումներին՝ կապված ֆիզիկական հանդիպումների հետ: Միջոցառումներն անցկացրեք առցանց: Մենք խորհուրդ ենք տալիս zoom-ի հարթակը, որը հարմար է առցանց հանդիպումների համար:

Կարևոր է: *Նախքան պորտալում նյութեր ներբեռնելը, համոզվեք, որ ընտրել եք ճիշտ լուսանկարներ, որոնք հստակ ցույց կտան, որ նկարագրված գործունեությունը տեղի է ունեցել էկոակումբի անդամների կողմից նկարագրված ժամանակ և վայրում: Կարող եք նաև ավելացնել հանդիպման մասնակիցների ցուցակ կամ այլ օժանդակ նյութեր: Ուղարկելով հստակ նկարագրություն և հաստատող տեղեկատվություն ՝ դուք կխնայեք նախագծի թիմի և էկոակումբի ժամանակը:*

ՆԻԿՈ ԿԵՑԽՈՎԵԼՈՒ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿ 2021 - ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ, ԵՎՈՒԱԿՈՒՄԲԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԾԱՆՈԹԱՑԻ՛Ր ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻՆ

1



Ո՛Չ ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆԸ

Աղքատությունը կարող է որակվել որպես փողի և/կամ կենաց ռեսուրսների այնպիսի պակաս, որոնք բարդացնում են, կամ անհնարին են դարձնում արժանվույն ապրելն ու սեփական անձի մասին հոգ տանելը:
Ամբողջ աշխարհում 836 միլիոն մարդ դեռ ծայրահեղ աղքատության մեջ է ապրում: Ցավոք, ակնկալվում է, որ դրանց թիվը COVID-19- ի պատճառով առաջացած ճգնաժամի հետևանքով էլ ավելի կաճի:

Այս առումով ամենավատ իրավիճակում են գտնվում երկու տարածաշրջան՝ Ենթասահարական Աֆրիկան և Հարավային Ասիան: Այս տարածաշրջաններում ծայրաղքատության մեջ ապրում է երկրագնդի բնակչության 70% -ը:

ԻՆՉՈ՞Ւ Է ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՀՈՒՅԺ ԿԱՐԵՎՈՐ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ #1 ՆՊԱՏԱԿԻՆ ՀԱՍՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ:

Կիրթ բնակչությունը կարող է տեղեկացված որոշումներ կայացնել: Դա նպաստում է հավասար իրավունքներին, տնտեսական զարգացմանը և բնական պաշարների կայուն կառավարմանը, ինչպես նաև հիմնական ծառայությունների մատուցմանը, սեփականատիրության, հողի և սեփականության վերահսկմանը, ժառանգության փոխանցմանը, ներառյալ համապատասխան նոր տեխնոլոգիաներն ու ֆինանսական ծառայությունները:

Հետևաբար, կրթության մատչելիությունը նպաստում է աղքատության նվազեցմանը:

ԻՆՉԻ՞ ԵՆՔ ՈՒՉՈՒՄ ՀԱՍՆԵԼ

- Թող այլևս ծայրահեղ աղքատություն չլինի: Ոչ ոք չպետք է ապրի օրական 6,3 լարիից պակաս գումարով:
- **Կիսվի աղքատության մեջ ապրող մարդկանց թիվը:**
- Յուրաքանչյուր ոք պետք է ունենա հավասար իրավունք օգտվելու տնտեսական ռեսուրսներից և բազիսային ծառայություններից (կրթություն, առողջապահություն, մաքուր ջուր և մատչելի սանիտարիա):
- Բարձրացնել անապահով համայնքների ունակությունը՝ դիմակայելու կլիմայի փոփոխության հետ կապված աղետներին և սոցիալ տնտեսական արտակարգ իրավիճակներին:

ԲԱՐԴ ԽՆԴԻ՞Ր Է ԹՎՈՒՄ

Այո, այդպես է: Աշխարհում 1 միլիարդից ավելի մարդ ապրում է օրական 6,3 լարիից պակաս գումարով: Թերևս դուք կարող եք ձեր լուման ներդնել այդ բարդ հիմնախնդրի վերացման մեջ:

ԻՆՉԻ՞Ց ՍԿՍԵԼ

Աղքատության մեջ ապրող մարդկանց քանակը կապվում է գործազրկության և կրթության պակասի հետ (հիմնականում խոցելի համայնքներում):

ՆԻՒՏ ԿԵՑՑՄՈՎԵԼՈՒ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿ 2021 - ԿՐԹՈՒԹՅՈՒՆ՝ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ, ԵՎՈԱԿՈՒՄԲԻ ՈՒՂԵՑՈՒՑ

ԷԿՈԱԿՈՒՄԲԻ ՀԱՄԱՐ «ՏՆԿԻՆԵՐ» ՀԱՎԱՔԵԼԸ

- Մասնակցեք սոցիալական ծրագրերի վերաբերյալ իրազեկության բարձրացման արշավին (առցանց կամ, եթե հնարավոր է, ֆիզիկական միջավայրում) . երկրների մեծամասնությունն ունի խոցելի համայնքները պաշտպանելու ռազմավարություն տարբեր սուբսիդիաների, նպաստների և դրամաշնորհային ծրագրերի միջոցով: Հասարակության ներկայացուցիչները երբեմն նույնիսկ չգիտեն այդ մասին, ուստի չեն կարող պաշտպանել իրենց իրավունքները:

  Այս հարցի մասին սովորեք ավելին, այնուհետև տեղեկատվությունը տարածեք ձեր ընկերների, ընտանիքի, հարևանների շրջապատում:

- Մասնակցել ձեռնարկատիրական ուսուցման կազմակերպմանը, ինչպես նաև աշխատանքի հետ կապված և հմտությունների զարգացման ծրագրում (առցանց կամ, հնարավորություն դեպքում՝ Ֆիզիկական միջավայրում). դուք կարող եք ավելացնել ձեռնարկատերերի քանակը: Դա ավելի շատ մարդկանց կապահովի աշխատանքով և եկամուտով, ինչը կհաղթահարի աղքատությունը: Տեղի ձեռնարկատերերին հրավիրեք թրեյնինգներ անցկացնելու կամ համապատասխան հմտություններ զարգացնելու նպատակով ձեռք բերեք տեղական ծրագիր ձեր և ձեր դասարանի համար: Նոր հմտությունների բարելավմամբ և տիրապետմամբ դուք, ձեր հասակակիցները, ինչպես նաև ձեր դպրոցի և համայնքի ներկայացուցիչները, ավելի իրավասու կդառնաք, որպեսզի մուտք գործեք աշխատանքային շուկա և աշխատանք գտնեք:

  Կարող եք ձեր դպրոց, համալսարան կամ տեղական համայնք հրավիրել մասնագետներ տարբեր ոլորտներից, անգամ ձեր ծնողներին: Այդ առաջադրանքները կատարելու համար կարող եք օգտագործել նաև առցանց ռեսուրսներ (օրինակ, նոր և ընթացիկ նախագծերի պորտալ՝ **https://projects.org.ge**) և գտնել ձեռներեցներին աջակցող կազմակերպություններ / ծրագրեր:

- Իմացեք ավելին տնտեսական իրավունքների մասին. ուսուցչի հետ հրավիրեք արդարադատության տան կամ քաղաքապետարանի մասնագետի: Խնդրեք նրանց վարել առցանց դաս հողերի և սեփականության իրավունքի վերաբերյալ:

- Աջակցեք խմբակցություններին, որոնք ժողովում են իրեր արտակարգ իրավիճակներում տուժած մարդկանց համար. տարբեր զարգացման գործակալություն (Կարմիր խաչ, ՄԱԿ-ի մանկական ֆոնդ և այլն), նախաձեռնող խումբը և ոչ կառավարական կազմակերպությունները կազմակերպում են արշավներ աղետից տուժած համայնքներին աջակցելու նպատակով: Բաժին հանեք հագուստ, սնունդ և այլ իրեր սոցիալապես անապահով բնակչության համար:

Յուրաքանչյուր միջոցառման համար տրվում է 30 «տնկի»:

«Տնկիները» ստանալու համար նախաձեռնության մանրամասն նկարագրությունը գործընթացի լուսանկարներով վերբեռնեք forestry.ge կայքում և նշեք «Կայուն զարգացման նպատակ» կատեգորիան 1:

ՆԻԿՈՂ ԿԵՑՈՒՎԵԼՈՒ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿ 2021 - ԿՐԹՈՒԹՅՈՒՆ՝ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ, ԷԿՈԱԿՈՒՄԲԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

2

Ո՛Չ ՍՈՎԻՆ

Աշխարհում 795 միլիոն մարդ անբավարար է սնվում և սպասվում է, որ այդ թիվը 2050 թվականին 2 միլիարդով կավելանա: Այդ մարդկանց ճնշող մեծամասնությունն ապրում է ցարգացող երկրներում, որտեղ բնակչության 12,9% -ը գտնվում է սովի եզրին.

ԻՆՉՈ՞Ւ Է ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԵՒՈՐ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ №2 ՆՊԱՏԱԿԻՆ ՀԱՍՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Ագրարային կրթությունը կարևոր է գյուղական համայնքների զարգացման և փոքր ֆերմերների եկամուտը մեծացնելու համար: Կրթությունը հատկապես կարևոր է կանանց և տեղական բնակչության համար: Նորագույն գիտելիքը մեզ օգնում է նաև խուսափել այնպիսի խնդիրներից, որոնք հետագայում կարող են հանգեցնել սովի, օրինակ՝ երաշտ, ջրհեղեղ և այլ բնական պատճառներով առաջացած աղետներ:

ԻՆՉԻ՞ ԵՆՔ ՈՒԶՈՒՄ ՀԱՍՆԵԼ

- **Ոչ ոք չքաղցի:**
- Յուրաքանչյուր ոք պետք է ունենա այնքան սննդարար սնունդ, որպեսզի առողջ լինի:
- Բարձրացնել գյուղատնտեսական արտադրողականությունը և տեղական արտադրողների համար ռեսուրսների մատչելիությունը:
- Մեծացնել ներդրումները գյուղատնտեսական ենթակառուցվածքներում և գյուղատնտեսության հետազոտությունների ոլորտում:

ԻՆՉՈ՞Ւ Է ՍԱ ԿԱՐԵՎՈՐ

Համարվում է, որ աշխարհում յուրաքանչյուր 8-րդ անձ տառապում է քրոնիկական սովից: Եթե ձեր բախտը բերել է, և նրանցից մեկը չեք, ձեր դպրոցում, շենքում կամ թաղամասում կարող են լինել մարդիկ, ովքեր ունեն սննդի պակասի խնդիր:

ԻՆՉԻ՞Ց ՍԿՍԵԼ

- Սովորեք սնունդ պատրաստել. դրանով դուք կկարողանաք ավելի առողջ և սննդարար սնունդ պատրաստել, ինչը կօգնի պահպանել առողջությունը:

- Ապրանքներ գնեք տեղական ֆերմերներից / արտադրողներից. սովորություն դարձրեք գնել տեղական ֆերմերներից, տեղական խանութներից և շուկաներից և դրանով աջակցել նրանց բիզնեսին:

ՆԻՒԹ ԿԵՑՈՒՄՎԵԼՈՒ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿ 2021 - ԿՐԹՈՒԹՅՈՒՆ՝ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ, ԵՒՈԱԿՄԻՄԲԻ ՈՐԵՑՈՒՑԱ

ԷԿՈԱԿՈՒՄԲԻ ՀԱՄԱՐ «ՏՆԿԻՆԵՐ» ՀԱՎԱՔԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ.

- **Կատարեք հարցում և գրեք հոդված / հոդվածների ցիկլ.**
  - Որքանո՞վ է առողջ սնունդը, որից օգտվում են դպրոցում կամ համայնքում գործող տարբեր սննդի կետերը: Իմացեք ավելին տեղական ֆերմերների արտադրած սննդամթերքի օգտագործման վերաբերյալ:
  - Գյուղատնտեսության առաջընթացի վերաբերյալ. Գյուղատնտեսության ոլորտը նորույթների և տեխնոլոգիական առաջընթացի կարիք ունի, որպեսզի աճի նրա արտադրողականությունը և պահպանվի կայունությունը: Սովորեք գյուղատնտեսության նոր պրակտիկայի մասին և ձեր իմացությունը փոխանցեք ձեր դասարանին, դպրոցին և համայնքին:
  - Անտառի ոչ փայտանյութային ռեսուրսների, սեզոնային բնական մթերքի և դրանցօգտագործման տեղական ավանդույթների մասին. ուշադրություն դարձրեք այդ ապրանքների անկայուն և անփույթ սպառման հետ կապված բնապահպանական և անվտանգության ռիսկերը:

- Մասնակցեք կամ սկսեք ձեր սեփական նախաձեռնությունը / արշավը (առցանց կամ, հնարավորության դեպքում՝ ֆիզիկական միջավայրում).

  - Տեղական ֆերմերների արտադրանքի ժողովրդայնության մասին: Հոգ տարեք բարձրացնել նրանց մասնաբաժինը տեղական շուկայում և խրախուսեք դրանց օգտագործումը տեղական սննդի կետերում:
  - Ինչպես օգտագործել անտառային ոչ փայտանյութային ռեսուրսները և սեզոնային բնական մթերքը նվազ ծախսերով և արդյունավետ:
  - Տեղական ուտեստների ժողովրդայնացման համար:

- Եղեք փոփոխությունների նախաձեռնողը. Հոգ տարեք, որ դպրոցում / դպրոցներում օգտվեք առողջ սննդից: Կարևոր է նաև, որ աշաերտները ապահովվեն ամենօրյա չափաբաժնով:

- Ձեռք բերեք գրականություն և անցկացրեք դասընթացներ. իմացիր ավելին և ուսուցանիր ուրիշներին սննդի մասին (առցանց կամ, հնարավորության դեպքում՝ ֆիզիկական միջավայրում). մեր առողջությունը կախված է մեր օգտագործած սննդից: Դուք կիմանաք ավելին սննդի և կպահպանեք առողջ սննդի ռեժիմ, դրանով կավելացնեք սեփական էներգիան և կբարելավեք առողջությունը: Սննդամթերք գնելիս դիտարկեք դրա սննդային արժեքը: Ուշադրություն դարձրեք, այս առաջադրանքը ուղղակիորեն կապված է կայուն զարգացման 3-րդ նպատակի հետ:

- Ապահովեք սննդի բանկեր / ապաստարաններ / սոցիալական ճաշարաններ. Գիտե՞ք արդյոք որ ամեն տարի մարդիկթափում են շուրջ 1,3 միլիարդ տոննա սնունդ: Դուք կարող եք սննդի բանկերի միջոցով սնունդ մատակարարել ձեր շրջապատի ամենակարիքավոր մարդկանց: Կիսեք այն ուտելիքը, որը հավաքվել

[5] ոչ պակաս, քան 30 հարցված:
[6] Հոդված կարող է համարվել միայն այն տեքստը, որը բավարարում է հետևյալ չափանիշները. (1) Տեքստի ծավալը ՝ նվազագույնը 300 բառ; (2) բացառիկություն. (3) արդիականություն. (4) Ազգային թեմատիկա: Գեղարվեստական տեքստերը չեն ընդունվի:

է անձնական տոները նշելու արդյունքում, ինչպիսիք են, օրինակ ծննդյան տոնը, դպրոցն ավարտելը, կամ՝ դպրոցական միջոցառումը:

- Մեկ օր տրամադրեք տեղական ապաստարանում մարդկանց կերակրելուն, որպես կամավոր ընկերներիդ հետ միասին աշխատիր տեղական ապաստարանում; Այդպես դուք կկարողանաք սնունդ հավաքել և կերակրել քաղցած մարդկանց: Ավելին՝ դա դարձրեք ձեր դասարանի համար ռեգուլյար գործունեություն:

- Սնունդը աճեցրեք անձամբ.[7] դպրոցը, հնարավոր է ՝ ունենա վարելահող, որն անօգտագործելի է: Մտածեք, թե ինչ լավ կլինի ցուցադրական հողամասի, ջերմոցի, փոքրիկ բանջարանոցի մշաումը: Որպես պարարտանյութ կարող եք օգտագործել կոմպոստ, որը կպատրաստեն աշակերտները տներից բերած և բակում հավաքված օրգանական թափոններից, իմացեք, թե ինչ հնարավորություններ կան, պատրաստեք նախագիծ և սկսեք գործնականում իրականացնել:

Յուաքանչյուր միջոցառում 30 «տնկիի» համարժեք է

«Տնկիները» ստանալու համար Forestry.ge- ում վերբեռնեք նախաձեռնության նկարագրությունը ընթացքը պատկերող լուսանկարներով և նշեք «Կայուն զարգացման նպատակը» կատեգորիան:

[7] Կոմպլեքս բնույթի ակտիվություն՝ Էկոակումբը պետք է սկսի մի քանի անկախ միջոցառում, օրինակ ՝ 1) հողամասի տրամադրում և համաձայնություն դպրոցի ղեկավարության հետ, (2) հողամասի մշակում, (3) տնկում, (4) բերքահավաք և այլն; Յուրաքանչյուր միջոցառում կգնահատվի առանձին:

ՆԻԿՈ ԿԵՑԽՈՎԵԼՈՒ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿ 2021 - ԿՐԹՈՒԹՅՈՒՆ՝ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ, ԷԿՈԱԿՈՒՄԲԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

3 ԱՌՈՂՋ ԱՊՐԵԼԱԿԵՐՊ ԵՎ ԲԱՐՕՐՈՒԹՅՈՒՆ

Բարօրությունը կյանքից բավարարվածության զգացում է: Մարդու համար այն նշանակում է առողջություն, երջանկություն և հաջողություն:

Առողջ ապրելակերպ նշանակում է հոգ տանել մարդու համար և հնարավորինս պաշտպանել նրան հիվանդությունից ու թունավորումից: Այս խնամքը պետք է մատչելի լինի բոլորին:

Տարեկան **1 միլիարդ** ԱՄՆ դոլար է ծախսվում պատվաստանյութերի վրա, ինչը տարեկան փրկում է 1 միլիոն երեխայի կյանք: 1990-ից ի վեր շնորհիվ պատվաստանյութերի օրական **17.000**-ով պակաս երեխա է մահանում; Սակայն, ցավոք, տարեկան ավելի քան **6 միլիոն** երեխա է մահանում նախքան հինգ տարեկան դառնալը:

ԻՆՉՈ՞Ւ Է ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԱՆՉԱՓ ԿԱՐԵՒՈՐ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ №3 ՆՊԱՏԱԿԻՆ ՀԱՍՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Կրթությունը որոշիչ դեր է խաղում մարդկանց իրազեկության բարձրացման գործում թմրանյութերի և ալկոհոլի օգտագործում և կանխարգելման, ինչպես նաև մտավոր առողջական խնդիրների մասին: Այն նաև մեզ տալիս է համապատասխան գիտելիքներ և տեղեկություն վերարտադրողական առողջության վերաբերյալ:

- **Օգտվեք պատվաստումից.** Խուսափվելիք հիվանդություններից մահացության հիմնական պատճառը պատվաստումների բացակայությունն է կամ դրանցից խուսափումը : Անհրաժեշտ պատվաստանյութի մասին տեղեկություններ ստանալու համար դիմեք բժշկի, դպրոցին, համալսարանին կամ այցելեք առողջապահության համաշխարհային կազմակերպության կայք էջ:

- Իմացեք ալկոհոլի և թմրանյութերի օգտագործման բացասական ազդեցության մասին. եթե երիտասարդը ժամանակին գիտակցի ալկոհոլի և թմրանյութերի օգտագործման վնասակար հետևանքները, նա կկարողանա ժամանակին կրճատել դրանց կիրառումը: Ձեռք բերեք բավական տեղեկություններ նշված հարցի վերաբերյալ և, անհրաժեշտության դեպքում, ժամանակին խնդրեք օգնություն Ձեզ կամ Ձեր ընկերոջ համար:

- **Կրճատել հնացած արտադրության և գյուղատնտեսական տեխնոլոգիաների կիրառմա հետ կապված ռիսկերը:** Մարդու սահմանադրական իրավունքն է տեղեկատվություն ունենալ առկա ռիսկերի վերաբերյալ: Բացահայտեք տեղում գոյություն ունեցող սպառնալիքները, տեղեկատվություն խնդրեք և պաշտպանեք ինքներդ ձեր և ուրիշների սահմանադրական իրավունքը: Ուշադրություն դարձրեք, որ այդ խնդիրը ուղղակիորեն կապված է կայուն է զարգացման 16-րդ նպատակի հետ:

- **Նվազեցնել օդի աղտոտվածության պատճառով առաջացած հիվանդությունը.** Ըստ միջազգային հետազոտությունների Վրաստանը այն երկրներից մեկն է, որտեղ օդի աղտոտվածության պպատճառով ամենաշատն է մարդկանց մահացությունը: Սրա հիմնական պատճառը հնացած ավտոպարկն է, որն աղտոտում է մթնոլորտային օդը: Խիստ խնդրահարույց է նաև կոշտ վառելիքի / վառելափայտի օգտագործումը տներում և դպրոցներում՝ ինչն առաջացնում է օդի աղտոտում բնակելի և աշխատանքային տարածքում:

- **Կրճատեք անառողջ սննդի ընդունումը.** ամենատարածված ու հատկապես վտանգավոր հիվանդությունների ռիսկերը կապված են անառողջ սննդի կամ սխալ և ավելորդ սնման հետ: Սննդամթերքի արտադրության, մատակարարման և սպառման վերահսկողությունը կարևոր միջոց է առողջական խնդիրներից խուսափելու համար:

[8] Energy and Air Pollution: World Energy Outlook Special Report 2016 (iiasa.ac.at); ANNEXE B&C Final_17162_World Health Statistics 2017 For Web-4.pdf (who.int); GBD Compare | IHME Viz Hub (healthdata.org);

ՆԻԿՈ ԿԵՑՈՒՄՆԵԼՈՒ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿ 2021 - ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ, ԷՈՒԱԿՈՒՄԲԻ ՈՐԵՑՈՒՑԻ

- **Մեքենան վարեք պատասխանատվությամբ.** որպես խնդիր նախանշեք ճանապարհատրանսպորտային պատահարների հետևանքով մահվան դեպքերի նվազեցումը: Վարորդական վկայական ունենալը արտոնություն է, նաև՝ պատասխանատվություն, հետևաբար ենթարկվեք ճանապարհային նշաններին և պահպանեք ճանապարհա յին երթևեկության կանոնները: Մեքենա վարելիս մի օգտագործեք ձեր բջջային հեռախոսը և մի նստեք ղեկի մոտ ալկոհոլի ազդեցության տակ: Դասարանում / աշխատավայրում կազմակերպեք ճանապարհային անվտանգության հետ կապված միջոցառում՝ տվյալ հարցի շուրջ հասակակիցներիդ / գործընկերներիդ տեղեկացնելու նպատակով:

  Դպրոցական էքսկուրսիաներ պլանավորելիս պահանջեք սարքին փոխադրամիջոց: Ամրացրեք գոտի և մյուսներին էլ խնդրեք նույնը անել: Մի հապաղեք վարորդին նկատողություն անել արագության գերազանցման ժամանակ և անմիջապես պահանջեք պահպանել ճանապարհային երթևեկության կանոնները:

- **Ջրային օբյեկտներում և այլ հանգստի գոտիներում պահպանեք անվտանգության կանոնները:** Վրաստանում գոյություն ունեցող աղետային (ինքնակամ կազմակերպված) հանգստյան վայրերում ամեն տարի տասնյակ մարդիկ, հիմնականում՝ երեխաներ են մահանում: Էքսկուրսիաների և արշավների ժամանակ հաճախակի են պատահարները: Պատասխանատու մարմիններից, ինքնակառավարումից և մասնավոր ընկերություններից պահանջել հանգստյան հետ կապված ռիսկերի գնահատում և աշխարհում հարմարեցված մեղմացնող միջոցառումների իրականացում:

ՆԻՒՏ ԿԵՑՑՈՒՎԵԼՈՒ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՄՐՑՈՒՆԱԿ 2021 - ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՒՐՈՒԹՅՈՒՆ

ԷԿՈԱԿՈՒՄԲԻ ՀԱՄԱՐ «ՏՆԿԻՆԵՐ» ՀԱՎԱՔԵԼՈՒ ՀԱՄԱՐ.

- Կազմակերպեք քննարկման խմբակներ (առցանց կամ հնարավորության սահմաններում՝ ֆիզիկական միջավայրում). հիվանդություններ ունեցող մարդկանց սոցիալական մեկուսացումը տարբեր համայնքներում տարածված խնդիր է: Խնդիրը կարող է լուծվել բաց երկխոսության միջոցով:

  Սա կօգնի ինտեգրվել հիվանդ մարդկանց ընտանիքի անդամների կամ ընկերների շրջանում սկսել անկեղծ զրույցներ առողջական խնդիրների մասին: Այս հարցի վերաբերյալ լրացուցիչ խորհրդատվության համար կարող եք կապվել խորհրդատուի հետ դպրոցում, համալսարանում, պետական կամ հասարակական կազմակերպությունում: Սա ուղղակիորեն կապված է հոգեկան հիվանդությունների հաղթահարման և ՄԻԱՎ / ՁԻԱՀ-ի և սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների մասին տեղեկատվության տարածման հետ:

- **Անցկացնել հետազոտություն, պատրաստել հոդված / հոդվածների ցիկլ.**

  - Մարդու առողջության հետ կապված տեղական խնդիրների (Օդի, ջրի, հողի, սննդի աղտոտում) և աշխատանքային անվտանգության մասին:
  - Տեղայնորեն փոխանցվող հիվանդությունների, դրանց կանխարգելման մեխանիզմների և կարիքների վերաբերյալ:
  - Ձվարճանքի, արշավի և էքսկուրսիաների անվտանգության մասին: Ուսումնասիրեք կոնկրետ փաստերը: Սկսեք քարոզել աղետային հանգստի/զվարճանքի գոտիների ուսումնասիրման, երաշխավորված և արգելված գոտիների նույնականացման, համապատասխան արգելող և նախազգուշացնող ազդանշանների տեղադրման, փրկարարական ծառայությունների հզորացման և հանգստի համար պատշաճ անվտանգ պայմաններ ստեղծելու համար:
  - Մեկնարկել արշավ դպրոցում լողի դասեր ներմուծելու և այդ նպատակով անհրաժեշտ ենթակառուցվածքներ կազմակերպելու համար:

- **Տվեք արյուն.**[9] Պարզեք, թե որտեղ է տեղական արյուն հանձնելու կետը: Դրանով դուք կկարողանաք օգնել արյան բանկերին ապահովվել արտակարգ իրավիճակների դեպքում մարդկանց օգնելու համար անհրաժեշտ արյան պաշարներով: Բացի այդ, լավ կլիներ, եթե կազմակերպեք արյան նվիրատվություն յուրաքանչյուր կիսամյակում կամ տարին մեկ անգամ դպրոցում, համալսարանում կամ աշխատավայրում:

- **Օգնեք մարդկանց հավասար մատչելիություն ունենալ դեղամիջոցներին.** Բոլոր մարդիկ, հատկապես գյուղական վայրերում, դեղերին հավասար մատչելիություն չունեն: Գյուղեր կամ արտակարգ իրավիճակներ ունեցող տարածքներ դեղեր հասցնելու արշավ կազմակերպեք: Դուք կարող եք այցելել այս տարածքները և առողջության և հիգիենայի հիմնական խնդիրների վերաբերյալ իրազեկության բարձրացման միջոցով օգնել բնակիչներին:

[9] Ո՞վ կարող է դառնալ արյան դոնոր: Կա մի քանի պահանջ, որոնց դուք պետք է բավարարեք. նախ, դուք պետք է լինեք չափահաս և կշռեք առնվազն 50 կիլոգրամ:

ՆԻԿՈՒ ԿԵՑՈՒՄՆԵԼՈՒ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿ 2021 - ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԿԱՅՈՒՆ ԶՈՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ, ԷԿՈԱԿՈՒՄԲԻ ՈՐԵՑՈՒՑԱ

- **Նպաստել COVID-19- ի կանխարգելմանը:** Այս վիրուսի մասին այսօր մենք շատ ավելին գիտենք, քան գիտեինք 2020 թվականի սկզբին: Օրինակ եղեք ուրիշների համար: Խստորեն պահպանեք կառավարության և հիվանդությունների վերահսկման ազգային կենտրոնի առաջարկությունները: Մտածեք, թե ինչ կարող եք անել այն խմբերի համար, որոնք առավել խոցելի են հիվանդությունների նկատմամբ:

- **Իմացեք ավելին զոոնոտիկ հիվանդությունների մասին և հոգ տարեք ֆերմերների իրազեկության մասին:** Մարդիկ և կենդանիները ունեն 70% ընդհանուր հիվանդություններ: Այդ հիվանդությունները կոչվում են զոոնոզներ:

  Կենդանիներից մարդուն փոխանցվող հիվանդությունները վտանգ են ներկայացնում մարդկանց առողջության և բարեկեցության համար: Վրաստանում տարածված հիվանդությունների շարքում ամենավտանգավորներն են սիբիրախտը, բրուցելյոզը և կատաղությունը:

  Հիվանդությունների կանխարգելման և բարեհույս համաճարակաբանական միջավայր պահպանելու համար Վրաստանում ամեն տարի իրականացվում է կենդանիների պատվաստում և նույնականացում-գրանցում: Այցելեք մոտակա ֆերմերային տնտեսություններ, ստուգեք, նույնականացված և պատվաստա՞ծ են անասունները: Հարցրեք նրանց տերերին, արդյոք ատարու՞մ են որևէ գրառո՞ւմ կենդանիների առողջության կարգավիճակի մասին: Գիտե՞ն, թե ինչ հիվանդությունների դեմ են պատվաստվել նրանց կենդանիները և ի՞նչ նպատակի է ծառայում կենդանիների նույնականացման հետազոտման համակարգը: Քանի՞ անգամ է անասնաբույժը մեկ տարվա ընթացքում այցելում և ունե՞ն նրա կոնտակտային համարը: Որքան է պահպանված ֆերմայում (տնային տնտեսություններում) հիգիենան, կա՞ բավարար օդ և մաքուրություն գոմում: Ինչ տեղում են կաթը կթում: Արդյո՞ք ֆերմերները կթելիս պահպանում են հիգիենիկ նորմերը (գործընթացի սկիզբ-ավարտ):

Հավաքած տեղեկատվության հիման վրա.



- Անցկացրեք բաց դաս զոոնոտիկ հիվանդությունների (սիբիրախտ, բրուցելյոզ և կատաղություն) վերաբերյալ:
- Մեկ օր անցկացրեք անասնաբույժի հետ և պատրաստեք հոդվածների շարք. անասնաբույժների կարիքների, գործունեության և դժվարությունների վերաբերյալ:
- Մեկ օր անցկացրեք ֆերմերի հետ: Պատրաստեք հոդվածներ, որոնք նկարագրում և վերլուծում են նրանց գործունեությունը:

Ծանուցում. Առաջադրանքին աջակցում է FAO-ի *Կենդանիների նույնականացում -գրանցման ծրագիրը:* Մրցութային տարվա ավարտին FAO- ն կբացահայտի իր ընտրածներին:

Յուրաքանչյուր միջոցառում 20 «տնկիի» համարժեք է

«Տնկիները» ստանալու համար Forestry.ge- ում վերբեռնեք նախաձեռնության նկարագրությունը՝ ընթացքը նկարագրող լուսանկարներով և նշեք «Կայուն զարգացման նպատակը» կատեգորիան:

ՆԻՒՍ ԿԵՑՈՒՄՎԵԼՈՒ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՄՐՑՈՒՆԱԿ 2021 - ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ, ԵՎՈԼՅՈՒՑԻԱՅԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

4 ՈՐԱԿՅԱԼ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Կրթությունը գիտելիքների, հմտությունների, արժեքների, տեսակետների և սովորությունների ձեռքբերում է: Որակյալ կրթությունը ուղղակիորեն ընդգրկում է այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ համապատասխան հմտությունների զարգացում, գենդերային հավասարության, հարմար դպրոցական ենթակառուցվածքների, սարքավորումների, ուսումնական նյութերի և ռեսուրսների, կրթաթոշակների կամ ուսումնական ուժի ապահովում:

Զարգացող երկրներում տարրական կրթությանգրանցված երեխաների քանակը հասնում է 91% -ի: Այնուամենայնիվ, 57 միլիոն երեխա դեռ դպրոցից դուրս է մնացել: Այս երեխաների կեսից ավելին ենթասահարական Աֆրիկայում է ապրում է: Նրանց 50% -ը ապրում է հակամարտությունից տուժած գոտիներում: 103 միլիոն երիտասարդ, ամբողջ աշխարհում, դեռևս անգրագետ է և նրանց 60% -ից ավելին աղջիկներ են:

ԻՆՉՈ՞Ւ Է ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԵՎՈՐ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ №4 ՆՊԱՏԱԿԻՆ ՀԱՍՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Չորրորդ նպատակի համար կարևոր է, որ կրթությունը, սկսած տարրական բազիսային մակարդակից, բոլորի համար լինի մատչելի:

Կոնկրետ առաջադրանքները ներառում են. ավելի լավ աշխատատեղեր ձեռք բերելու նպատակով տեխնիկական և մասնագիտական վերապատրաստման ապահովում, կանանց և տղամարդկանց միջև կրթության մատչելիության հարցում անհավասարության ավարտ, համապատասխան կրթության ապահովում ՍՀՈՒ երեխաների, բնիկ բնակչության և հակամարտությունների կամ բնական աղետների հետևանքով տուժած անձանց համար, դպրոցական հաստատությունների վերափոխում առավել անվտանգ և դրական միջավայրի, որակավորված ուսուցիչների քանակի ավելացում և կրթության խթանում կայուն զարգացման համար:

ԻՆՉԻ՞ ԵՆՔ ՈՒՂՈՒՄ ՀԱՍՆԵԼ

- **12-ամյա կրթությամբ ապահովվի յուրաքանչյուր երեխա:**
- Բոլոր երիտասարդները կարող են գրել և կարդալ սովորել:
- **Յուրաքանչյուր ոք ունենա կրթության տարբեր մակարդակների մատչելիություն:**
- Որակյալ կրթությանը պետք է հաջորդեն զբաղվածության հնարավորությունները:
- Յուրաքանչյուր ոք ունենա իրավունք ստանալու մատչելի և որակյալ տեխնիկական կրթություն, այդ թվում ՝ համալսարանական:
- Աշակերտները իմանան, թե ինչ է կայուն ապրելակերպը:
- **Ստեղծել ուսումնական միջավայր, որը անվտանգ է բոլորի համար, ոչ բռնի, ներառական և արդյունավետ:**

Եթե դուք այն երիտասարդներից եք, ովքեր ունեն կամ ունեցել են դպրոց հաճախելու հնարավորություն, ուրեմն Ձեր բախտը բերել է:

Կան բազմաթիվ պատճառներ, թե ինչու են երիտասարդները կամ երեխաները թողնում դպրոցը: Հակամարտություններն ու բնական աղետները խոչընդոտում են 75 միլիոն երեխաների ուսումնական գործընթացը: Բացի այդ, աշխարհում կա 5-ից 10 տարեկան 168 միլիոն երեխա, որոնք ներգրավված են աշխատանքի մեջ, ինչի պատճառով նրանք ստիպված են դադարել դպրոց գնալ:

ԻՆՉԻ՞Ց ՍԿՍԵԼ

- **Դարձեք դասուսույց կամ օգնեք ուրիշներին պատրաստել տնային առաջադրանքները.** շաբաթը 1-2 ժամ հատկացրեք օգնելու այն երիտասարդներին, որոնց համար մատչելի չէ կրթությունը, կամ չունեն բավարար միջոցներ դասուսույց վարձելու համար:

ՆԻՒՅՈՐՔԻ ԿԵՆՑԱՂՎԵԼՈՒ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՄՐՑՈՒՆԱԿ 2021 - ԿՐԹՈՒԹՅՈՒՆ՝ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ, ԷԿՈՆԱՀՈՒՄԲԻ ՈՒՐԵՑՈՒՑԱ

- **Սովորեցրեք անգլերեն.** Դարձեք կամավոր ՀԿ-ում կամ աշխատեք ինքնուրույն, որ անգլերենի ուսուցումը մատչելի դառնա երիտասարդների և չափահասների համար, ովքեր նախկինում այդ հնարավորությունը չեն ունեցել: Գլոբալացված աշխարհում անգլերենի վարժ իմացությունը ամենապահանջված հմտություններից մեկն է:

ՈՐՊԵՍԶԻ ԷԿՈԱԿՈՒՄԲԻ ՀԱՄԱՐ «ՏՆԿԻՆԵՐ» ՀԱՎԱՔԵՔ.

- Պաշտպանեք ձեր և ձեր հասակակիցների որակյալ կրթության իրավունքը: Կան դպրոցներ և էկոակումբներ, որոնք տարբեր պատճառներով չեն կարող լիովին օգտվել առցանց գործիքների առկայությունից: Գտեք ձեր համայնքում դպրոցներ կամ խմբեր, որոնք լրացուցիչ ուշադրության կարիք ունեն:

  Կարևոր է, որ արտակարգ իրավիճակներում նրանց որակյալ կրթություն ստանալու իրավունքը չխախտվի: Գրեք մեզ խնդրի նկարագրությունը և տեղեկացրեք, թե ինչ լուծում եք տեսնում: Պատրաստեք մի հոդված, որտեղ կարող եք առաջարկել հիմնախնդրի լուծման ձեր տարբերակը (100 բառից ոչ պակաս) և ուղարկեք մեզ պորտալի միջոցով:

- Սկսեք առցանց արշավ, որտեղ խոսեք կրթության կարևորության մասին. Աշխարհում շատ երիտասարդներ կան, ովքեր կրթություն չունեն կամ տարբեր պատճառներով թողել են դպրոցը: Արշավ սկսեք այն մասին, թե որքան կարևոր է յուրաքանչյուր տղայի և աղջկա համար 12-ամյա կրթությունը և աշխատեք, որ հնարավորինս շատ ծնողներ իմանան այդ խնդրի մասին:

- Դպրոցի տնօրինության հետ միասին ստեղծեք դպրոցի ընկերների ակումբ և հիմնեք դպրոցի զարգացման համայնքային ֆոնդ՝ որը կծառայի ուսման պայմանների բարելավմանը, կսահմանի կրթաթոշակներ հաջողակ աշակերտների և ուսուցիչների համար, կօժանդակի դպրոցում տարբեր ակումբների ստեղծմանը և որակյալ մասնագետներ հրավիրելուն, կբարելավի դպրոցական ենթակառուցվածքները, կներառի առողջ, լիարժեք և մատչելի սնունդ:

- Նվիրաբերեք գրքեր. կազմակերպեք դասարանային շուկա և հավաքեք դասագրքեր: Հավաքված գրքերը նվիրեք այն երեխաներին, ովքեր չունեն բավարար միջոցներ դրանք ձեռք բերելու համար:

- Կազմակերպել դրամահավաք արշավ դպրոցում (առցանց կամ, հնարավորության դեպքում, ֆիզիկական միջավայրում). շատ դպրոցներ երեխաներին տրամադրում է կրթաթոշակներ և նպաստներ: Գումար հավաքեք բարեգործական միջոցառումների կազմակերպմամբ և օգնեք սոցիալապես անապահով երիտասարդներին ստանալ կրթություն:

ՆԻԿՈՂ ԿԵՑՈՒՎԵԼՈՒ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿ 2021 - ԿՐԹՈՒԹՅՈՒՆ՝ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ, ԷԿՈԱԿՈՒՄԲԻ ՈՐԵՑՈՒՑԻՉ

- Կազմակերպեք սեմինարներ և կիսվեք ձեր գիտելիքներով՝ ուրիշներին սովորեցնելու համար (առցանց կամ, եթե հնարավոր է, ֆիզիկական միջավայրում). Դուք կարող եք շատ բան սովորել ձեր ընկերներից և հասակակիցներից: Եթե ավագ դասարանի աշակերտ եք, կամ էլ համալսարանի ուսանող, պլանավորեք մի քանի արտադասարանական պարապմունք, որի ընթացքում կկիսվեք ձեր գիտելիքներով ձեր դասընկերների / համակուրսեցիների հետ: Այդ նպատակով կարող եք հանդիպել նաև այլ դպրոցների / համալսարանների աշակերտների/ ուսանողների/երիտասարդների:

- Կազմակերպել միջոցառումներ (առցանց կամ, եթե հնարավոր է, ֆիզիկական միջավայրում) տարբեր կազմակերպությունների հետ, որպեսզի ձեռք բերեք համապատասխան մասնագիտական և սոցիալական հմտություններ. հրավիրեք մասնագետների և խնդրեք նրանց խոսել սեփական մասնագիտությունների և պահանջվող հմտությունների վերաբերյալ: Այս գիտելիքները ձեռք բերելու համար կարող եք նաև անցկացնել միջոցառումներ սոցիալապես անապահով երիտասարդների համար:

- Անցկացրեք դասեր կայուն զարգացման նպատակների վերաբերյալ (առցանց կամ, հնարավորության դեպքում, ֆիզիկական միջավայրում). որպեսզի հնարավորինս ավելի շատ երիտասարդ բարձրացնի իրազեկությունը կայուն ապրելակերպի մասին, տարածեք այս մրցույթի ուղեցույցը ձեր ընկերների և ընտանիքի անդամների մեջ, անցկացրեք կայուն զարգացման նպատակների վերաբերյալ դաս կամ կրթական նստաշրջան: Կարող եք օգտագործել World’s Largest Lesson-ի դասերը որոնք, հատուկ նախագծված են երիտասարդների համար:

- Պատմեք ձեր ընկեր դպրոցներին Նիկո Կեցխովելու անվան մրցանակի մասին (առցանց, եթե հնարավոր է, ֆիզիկական միջավայրում): Օգնեք նրանց ստեղծել Էկոակումբ և ներգրավվել նախագծում: Լավ կլինի, եթե ուշադրություն դարձնեք այնպիսի դպրոցների և կենտրոնների վրա, որոնք ավելի քիչ հնարավորություններ ունեն և ավելի մեծ է ձեր ուշադրության կարիքը:

- Դադարեցրեք բուլինգը (ճնշումը). ուսումնական հաստատություններում պետք է ապահով աշակերտների հուզական և ֆիզիկական բարեկեցությունը: Համոզվեք, որ բացահայտել եք բռնություն գործադրողներին և որ ձեր դասարանում տեղ կա անկեղծ զրույցների համար:

- Խնդրագրով դիմեք ձեր դպրոցին, հասանելի դարձնել ենթակառուցվածքներ. ցավոք, այսօր ոչ բոլոր դպրոցներն են հարմարեցված սահմանափակ կարողություն ունեցող երեխաների և երիտասարդների համար:Արդյունքում, հատուկ կրթության կարիք ունեցող երիտասարդները հաճախ մեկուսացված են և չեն կարողանում շփվել հասակակիցների հետ: Պատրաստեք խնդրագիր

ՆԻԿՈ ԿԵՑԽՈՎԵԼՈՒ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿ 2021 - ԿՐԹՈՒԹՅՈՒՆ՝ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ, ԷԿՈԱԿՈՒՄԲԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ձեր և այլ դասարանների հետ, որ կառուցվեն թեքահարթակներ և այլ ենթակառուցվածքներ, որոնք անհրաժեշտ են ներառական միջավայրի համար: Շատ կարևոր է նաև, որ դպրոցում լինի մաքուր խմելու ջուր, հիգիենա և սանիտարիայի պաշտպանության համար անհրաժեշտ ենթակառուցվածք: Եթե կարծում եք, որ դպրոցում նշված հնարավորությունը չկա, դպրոցի ղեկավարության և (կամ) կրթության նախարարության հասցեով ուղարկեք այս թեմայով պատրաստված խնդրագիր:

- Ջուր. աշխարհի ջրի 3% -ից պակասը անվտանգ է խմելու համար: Այստեղից 2.5% -ը սառած է Անտարկտիդայում, Արկտիկայում և սառցադաշտերում: Ըստ այդմ, մարդկությունը խմելու ջրի հետ կապված բոլոր կարիքները բավարարելու համար պետք է ապավինի մնացած 0,5% -ին: 1 միլիարդից ավելի մարդ դեռ խմելու ջուր չունի:

- Էներգիա. Չնայած տեխնոլոգիական առաջընթացներին, որոնք արագացնում են էներգիայի արդյունավետ կուտակումը, տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության անդամ երկրների կողմից 2021 թվականին օգտագործված էներգիան 35% -ով կաճի:

ԻՆՉՈ՞Ւ Է ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԵՎՈՐ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ №12 ՆՊԱՏԱԿԻՆ ՀԱՍՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Որակյալ կրթությունը խոչընդոտում է թափոնների առաջացմանը 4 կարևոր պրակտիկայի (4R) ներկայացմամբ՝ կրճատում, վերաօգտագործում, վերամշակում և վերականգնում:

Հանրությանը տեղեկացնելն ու կրթելը մատչելի է դարձնում բոլոր միջոցները, որոնք անհրաժեշտ են բնության հետ ներդաշնակ ապրելու և կայուն ապրելակերպի համար:

ԻՆՉԻ՞Ց ՍԿՍԵԼ

- **Կրճատեք թղթի օգտագործումը.** փորձեք ընդհանրապես չօգտագործել թուղթ և այն փոխարինել էլեկտրոնային սարքերով: Եթե դա հնարավոր չէ, տպեք թղթի երկու երեսին՝ ավելի քիչ ռեսուրսներ օգտագործելով կպահպանեք ավելի շատ ծառ:

- **Գնեք վերամշակված արտադրանք կամ վերամշակեք ինքներդ.** կարող եք, գտնել բազմակի ստեղծագործական եղանակներ վերաօգտագործելու Ձեր տան այն իրերը, որոնք ցանկանում էիք դեն նետել: Որպես ոգեշնչման աղբյուր գտեք «Արե՛ք ինքներդ» վերնագրով տեսանյութեր և հոդվածներ, կամ հենվեք ձեր տեղծագործականության վրա: Կարող եք նաև գնել վերամշակված նյութերից պատրաստված իրեր: Այդպես վարվելը կնվազեցնի վատնած ռեսուրսների քանակը:

- **Կրճատեք ջրի սպառումը.** կրճատեք ցնցուղի տակ անցկացրած ժամանակը, փակեք ծորակը ամանները լվանալիս և հիշեցրեք ընտանիքի անդամին, որ նույնը անի:

- **Գիշերն անջատեք էլեկտրոնային սարքերը.** Էլեկտրոնային սարքերը լիցքավորեք օրվա ընթացքում և ժամանակին անջատեք դրանք լիցքավորվելուց հետո: Ուշադրություն դարձրեք այն սարքերին, որոնք չեք օգտագործում գիշերը (լույս, օդորակիչ և այլն) և քնելուց առաջ անջատեք:

- **Մեքենայի անվադողերը փչել.** դա կարող է նվազեցնել վառելիքի ծախսը:

- **Ներբեռնեք և օգտագործեք սննդի տրամադրման ծրագրեր.** կարող եք ներբեռնեք ծրագրեր տարբեր վայրերից, որպեսզի ուրիշին բաժին հանեք ավելացած սննդից և կրճատեք ձեր ընտանիքում կուտակված սննդի թափոնները: Վրաստանում նման ծրագրեր չունե՞նք: Միգուցե հենց դո՞ւք պետք է ստեղծեք: Պարզեք, թե ինչն է խոչընդոտում սննդի մնացորդի կրճատմանը մեր երկրում:

[11] Reduce, Reuse, Resycle, Recover

ՆԻԿՈ ԿԵՑՈՒՄՆԵԼՈՒ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿ 2021 - ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ, ԷՈՒԱԿՈՒՄԲԻ ՈՐԵՑՈՒՑԱ

- **Մննդամթերք գնեք այնպիսի խանութներում, որոնք թափոններ չեն առաջացնում.** գտեք այնպիսի մթերային խանութներ ձեր տարածքում, որոնք վաճառում են առանց փաթեթավորման (զրոյական թափոններ են ստեղծում) և տեսեք, թե ինչպես դա կօգնի պլաստմասսայի, թղթի և փաթեթավորման համար կիրառվող այլ նյութերի քանակը:

- **Ընտրեք բազմակի օգտագործման ապրանքներ.** նգնումների համար կարող եք գնել էկոպայուսակներ, իսկ պլաստմասսե թափոնների քանակը նվազեցնելու համար խուսափեք պլաստիկ շշեր կամ բաժակներ օգտագործելուց:

ՈՐՊԵՍԶԻ ԷԿՈԱԿՈՒՄԲԻ ՀԱՄԱՐ «ՏՆԿԻՆԵՐ» ՀԱՎԱՔԵՔ».

- **Նվիրաբերեք հին հագուստը և էլեկտրոնային սարքերը.** իմացեք այն կազմակերպությունների ցուցակը, որոնք հավաքում են իրեր չունևորների համար և բարեգործության տեսքով տվեք այն իրերը, որոնք նրանք կարող են նորից օգտագործել: Արդյունքում կստանանք ավելի քիչ սպառում և ավելի քիչ ազդեցություն շրջակա միջավայրի վրա:

- **Պատրաստեք ձեռագործ նվերներ.** դուք կարող եք ցուցաբերել ստեղծագործական ունակություններ և ձեր ընկերների համար պատրաստել նվերներ վերամշակված իրերից , ինչը կլինի ռեսուրսների կայուն սպառում:

- **Անցկացրեք վերօգտագործման և վերամշակման վերաբերյալ սեմինար.** Ձեր հասակակիցներին հետաքրքրեք վերամշակման գաղափարով: Դուք կարող եք ավելի շատ մարդկանց իրազեկել թափոնների ազդեցության մասին և աջակցել, որ ընտրեն կայուն ապրելակերպ:

- **Դպրոցում կամ տանը տեղադրեք աղբի տարանջատման աղբամաններ.** սկսեք այս միտքն իրականացնել դպրոցի / համալսարանի ղեկավարության կամ թափոնների կառավարման վրա կենտրոնացած ոչ պետական կազմակերպությունների հետ:

- **Լոբբինգ[12] սկսել աղտոտվածության նվազեցման և շրջակա միջավայրի վրա ազդեցության հետ կապված կորպորատիվ պատասխանատվությանը.** միացեք խնդրագրերին և արշավներին, որոնք բացահայտում են այնպիսի ձեռնարկություններ, որոնք չեն հետապնդում կայունության սկզբունքը: Ընտրեք և գնեք ապրանքներ այնպիսի կազմակերպություններից, որոնք գտնվում են կայունության սկզբունքը պաշտպանող կազմակերպությունների ցուցակներում:

[12] Լոբբինգը քաղաքական ներկայացուցչության որոշումների կամ գործունեության վրա ազդելու օրինական միջոց է:

ՆԻՒՍ ԿԵՑՈՒՄՎԵԼՈՒ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՄՐՑՈՒՆԱԿ 2021 - ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ԿԱՅՈՒՆ, ՀԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ, ԷԿՈԱԿՈՒՄԲԻ ՈՐՊԵՍԶԻ

- **Կերեք բուսական. փորձեք գիտակցաբար նվազեցնել մսի օգտագործումը:** Մսի արդյունաբերությունը ջրային ռեսուրսների սպառման արդյունքում առաջացնում է հսկայական քանակությամբ թափոններ և աղտոտում շրջակա միջավայրը: Համոզիր քո դպրոցի ղեկավարությանը դպրոցական ճաշարանում շաբաթը մեկ օր անցնել միայն բուսական սննդի:

Յուրաքանչյուր միջոցառման համար շնորհվում է 30 «տնկի»:

«Տնկիները» ստանալու համար Forestry.ge- ում վերբեռնեք նախաձեռնության նկարագրությունը՝ ընթացքը լուսաբանող լուսանկարներով և նշեք «Կայուն զարգացման նպատակ» կատեգորիան:

ՆԻԿՈ ԿԵՑՈՒՎԵԼՈՒ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿ 2021 - ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ, ԷԿՈԱԿՏԻՎԻԶՄԻ ՈՐԵՑՈՒՑԻ

13

ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆԸ ՀԱԿԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կլիմայի փոփոխությունը եղանակի միջին օրինաչափության փոփոխություն է, ինչը որոշ ժամանակի ընթացքում դիտվում է տվյալ տարածաշրջանում: Այս օրինաչափությունները ներառում են բոլոր այն տարրերը, որոնք մենք, սովորաբար կապում ենք եղանակի հետ, ինչպիսիք են՝ ջերմաստիճանը, քամին և տեղումները: Կլիմայի փոփոխությունն ամբողջ աշխարհում ենթադրում է փոփոխություններ, որոնք կանդրադառնան ողջ մոլորակի վրա: Երկարաժամկետ հեռանկարում կլիմայի հետ կապված փոփոխությունների արագությունն ու մասշտաբները կարող են հսկայական ազդեցություն ունենալ էկոհամակարգի և մարդու գործունեության վրա:

1990 թվականից մինչև 2012 թվականը միջին գլոբալ ջերմաստիճանը 0.85° C-ով աճեց: Գլոբալ առումով զգալիորեն կրճատվել է եգիպտացորենի, ցորենի և այլ հիմնական հացահատիկային բերքը, ինչը1981-2012 թվականներին ավելի տաք կլիմայի պատճառով կազմել է տարեկան 40 մեգատոն: 1901-ից 2010 թվականներին ծովի միջին գլոբալ մակարդակը 19 սմ-ով բարձրացավ, օվկիանոսները ընդլայնվեցին սառույցի հալման պատճառով: 1979 թվականից հետո Արկտիկայի ծովի սառույցը մշտապես նվազում է՝ միջին հաշվով յուրաքանչյուր 10 տարում կորում է 1,07 միլիոն քառակուսի կիլոմետր: Հաշվի առնելով ջերմոցային գազի կոնցենտրացիան և արտազատումը՝ սպասվում է, որ այս դարի վերջին, 1900-ի համեմատ, գլոբալ ջերմաստիճանի բարձրացումը կգերազանցի 1.5 ° C- ը: Ենթադրվում է, որ 2065 թվականին ծովի մակարդակի միջին տարեկան բարձրացումը կհասնի՝ 25-30 սմ, և 2100 թվականին՝ տարեկան 40-63 սմ: Ածխածնի երկօքսիդի (CO_2) գլոբալ արտանետումներն 1900 թվականի համեմատ աճել են գրեթե 50%-ով:

ԻՆՉՈ՞Ւ Է ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԵՎՈՐ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ №13 ՆՊԱՏԱԿԻՆ ՀԱՍՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Կլիմայի փոփոխության (CCE) վերաբերյալ որակյալ կրթության կբարձրացնի մարդկային կարողությունների վերաբերյալ իրազեկումը: Կրթված համայնքը կարող է հոգ տանել կլիմայի փոփոխության նվազեցման, հարմարվողության և դրա ազդեցության նվազեցման մասին:

CCE- ն նաև բավարար հնարավորություններ է ստեղծում կլիմայի փոփոխության ճիշտ կառավարման և այդ գործընթացի մեղմացման համար:

ԻՆՉԻ՞ ԵՆՔ ՈՒԶՈՒՄ ՀԱՍՆԵԼ

- Մարդիկ առավել պատրաստ լինեն հաղթահարելու բնական աղետները:
- Բարձրացնել կլիմայի փոփոխության վերաբերյալ կրթությունն ու իրազեկությունը:

ՈՐՊԵՍԶԻ ԷԿՈԱԿՈՒՄԲԻ ՀԱՄԱՐ «ՏՆԿԻՆԵՐ» ՀԱՎԱՔԵՔ».

- **Անցկացրեք սեմինարներ, թե ինչպես վարվել աղետի դեպքում.** կարևոր է, որ սեմինարները ներառեն աղետների ռիսկի կառավարման գործընթացի տարբեր խնդիրներ, ինչպիսիք են համայնքի ներգրավվածությունը, խոցելի խմբերը և այլն:

  Կապվեք բնական աղետներին արձագանքելու համար պատասխանատու գործակալությունների հետ, սեմինարին արդյունավետորեն նախապատրաստվելու համար: Կարող եք առաջնորդվել **Forestry.ge-ում տեղադրված ուսումնական փաստաթղթերով,** որպեսզի իմանաք ավելին աղետների ռիսկի կառավարման և մեղմացման թեմաների մասին: Սա կօգնի ձեզ և ձեր հասակակիցներին զինվել անհրաժեշտ գիտելիքներով և ավելի լավ պատրաստվել աղետներին:

- **Հաշվեք ձեր ածխածնի արտանետումը և կազմեք գործողությունների ծրագիր բնապահպանության համար.** համացանցում որոնեք ածխածնի արտանետումները հաշվարկող անվճար հաշվիչ և նպատակադրվեք կրճատել այն:

- **Անցկացրեք դասընթաց կլիմայի փոփոխության կանխարգելման վերաբերյալ.** հիմա, երբ արդեն գիտեք կլիմայի փոփոխության դեմ գործողությունների մասին, դարձեք ակտիվիստ և անցկացրեք սեմինարներ: Ուսուցանել այլ մարդկանց Սովորեցրեք ուրիշներին, թե ինչպես գործել և ինչպես ավելի կենտրոնանալ շրջակա միջավայրի վրա:

ՆԻԿՈ ԿԵՑՈՒՎԵԼՈՒ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿ 2021 - ԿՐԹՈՒԹՅՈՒՆ՝ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ, ԷԿՈԱԿՈՒՄԲԻ ՈՐՊԵՍԶԻ

- **Վերամշակում.** որքան քիչ թափոններ, այնքան անվտանգ միջավայր: Տարանջատել թուղթը, ապակին, պլաստմասսան, մետաղը, հին էլեկտրասարքավորումները: Բոլորն էլ պետք է վերամշակել, դրանք տարեք վերամշակման մոտակա կետ: Եթե նկատում եք, որ ձեր քաղաքը չի մտածում թափոնների տարանջատման մասին, փորձեք պարզել դրա պատճառը: Պատրաստեք խնդրագիր և կոչ արեք քաղաքապետարանին թափոնների տեսակավորումը չթողնել առանց ուշադրության:

- **Պլանավորել և իրականացնել աշխատանքներ էկոբարեկամ** տրանսպորտի մասսայականացման ուղղությամբ. պահանջեք ավելի լավ հասարակական տրանսպորտ, պլանավորեք և իրականացրեք / քարոզչություն՝ հրաժարվել բարձր արտանետումներ ունեցող, հզոր կամ անսարք մասնավոր տրանսպորտից: Արմատավորեք առողջ ապրելակերպ և խթանեք հեծանիվով կամ հետիոտն տեղաշարժվելու մասսայականացումը:

Յուրաքանչյուր միջոցառման համար շնորհվում է 30 «տնկի»:

«Տնկիները» ստանալու համար Forestry.ge- ում վերբեռնեք նախաձեռնության նկարագրությունը՝ ընթացքը լուաբանող լուսանկարներով և նշեք «Կայուն զարգացման նպատակ» կատեգորիան:

ՆԻԿՈ ԿԵՑԽՈՎԵԼՈՒ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿ 2021 - ԿՐԹՈՒԹՅՈՒՆ՝ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ, ԷԿՈԱԿՈՒՄԲԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ



14

ՕՎԿԻԱՆՈՍԻ ԵՎ ԾՈՎԻ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Մենք օգտագործում ենք օվկիանոսի ռեսուրսները (լինի դա կենդանական, բուսական կամ այլ) որպեսզի բարելավենք մեր կյանքի պայմանները: Կայուն շահագործում նշանակում է բավարարել առկա կարիքներն այնպես, որպեսզի չվտանգեն հաջորդ սերնդի կարիքները:

Աշխարհի մարջանե ժայռերի 20% -ը ոչնչացվել է՝ առանց վերականգնման հնարավորության: Մնացած ժայռերի շուրջ 24% -ը ոչնչացման վտանգի տակ է մարդկային գործունեության արդյունքում և 26% -ին սպառնում է ոչնչացում երկարաժամկետ հեռանկարում: Օվկիանոսները ծածկում են երկրի մակերեսի երեք քառորդը, ընդգրկում են Երկրի մակերեսի 97% -ը և ներկայացնում մոլորակի բնակելի տարածքի 99% -ը: Օվկիանոսներում բացահայտվել է կենդանի օրգանիզմի 20,000 տեսակ, բայց իրական թվերը կարող են անցնել միլիոնը՝ նրանցից շատերը դեռ սպասում են իրենց բացահայտմանը:

ԻՆՉՈ՞Ւ Է ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԵՎՈՐ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ №14 ՆՊԱՏԱԿԻՆ ՀԱՄՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Օվկիանոսների մասին կրթությունը խորացվում է գիտական համագործակցությամբ և բոլոր մակարդակներում գիտելիքների փոխանակմամբ, հետազոտական կարողությունների և ծովային տեխնոլոգիայի զարգացմամբ:

ԻՆՉԻ՞ ԵՆՔ ՈՒԶՈՒՄ ՀԱՄՆԵԼ:

- Նվազեցնել ծովերի և օվկիանոսների աղտոտումը:
- Կասեցնել մեծամասշտաբ ապօրինի ձկնորսությունը:
- Հավասար հնարավորություններ փոքր մասշտաբի ձկնորսության համար:
- Պաշտպանեք օվկիանոսի և ծովի էկոհամակարգերը:

Գիտակցո՞ւմ եք, որ ամեն ինչ վերադառնում է ձեր ափսե: Օվկիանոսը մերն աղբարկղը չէ: Համաշխարհային օվկիանոսի 40% -ը ծայրաստիճան վնասված է մարդկային գործունեության արդյունքում: Ավելին, ավելի քան 3 միլիարդ մարդու ապրուստը կախված է ծովային և ծովափնյա կենսաբազմազանությունից: Պարզ ասած՝ աշխարհի բնակչության գրեթե կեսի գոյությունը կախված է օվկիանոսներից:

ԻՆՉԻ՞Ց ՍԿՍԵԼ

- **Մի թափեք թափոնները գետերի և օվկիանոսների մեջ** և բացահայտեք նրանց, ովքեր դա անում են:

- **Գնեք տեղական և օրինական ճանապարհով որսված ձուկ.** դրանով կօգնեք փոքր ձեռներեցներին: Գնելիս համոզվեք, որ ֆերմերն ունի ձկան բիզնեսի արտադրության համար անհրաժեշտ փաստաթղթեր:

ՆԻԿՈ ԿԵՑԽՈՎԵԼՈՒ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿ 2021 - ԿՐԹՈՒԹՅՈՒՆ՝ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ, ԷԿՈԱԿՈՒՄԲԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՈՐՊԵՍԶԻ ԷԿՈԱԿՈՒՄԲԻ ՀԱՄԱՐ «ՏՆԿԻՆԵՐ» ՀԱՎԱՔԵՔ».

Ի՞նչ կարող եք անել ստորջրյա աշխարհի համար:

- Պլաստմասսայի օգտագործման դեմ արշավներ. Տեղեկատվություն տարածեք ծովերում և օվկիանոսներում պլաստմասսայի ոչ պատշաճ տեղադրման բացասական արդյունքների մասին:

- Տեղեկացրեք ընկերներին օվկիանոսների և ծովերի ռեսուրսների կարևորության մասին. YouthSpeak- ի հետազոտության համաձայն երիտասարդների միայն 2% -ն է պատրաստակամություն հայտնել աջակցելու ծովերի և օվկիանոսների համակարգի պահպանմանը: Սա նշանակում է, որ երիտասարդները բավարար գիտելիքներ չունեն, թե մեր առօրյա կյանքի համար որքան կարևոր է օվկիանոսները մաքուր պահելը: Պատրաստեք մի քանի շնորհանդես TED Talks-ի ոճով այն մասին, թե ինչ դեր են խաղում օվկիանոսները մեր կյանքում, կամ լսարանին ցույց տվեք Youtube-ի տեսահոլովակները օվկիանոսների և նրա բնակիչների վրա թափոնների վնասակար ազդեցության մասին:

- Գիտակցաբար մոտեցեք թափոնների հեռացմանը և ջրի Էկոհամակարգի վրա դրանց ազդեցությանը . Գտեք և տարածեք օգտակար խորհուրդներ թափոնների վերաբերյալ, հատկապես՝ ապակու, պլաստմասսայի, մարտկոցների և այլն, տեղակայման մասին: Խուսափեք ծովային էկոհամակարգը վնասելուց:

- Դադարեցրեք պոլիէթիլենային տոպրակների օգտագործումը. պլաստմասսայի օգտագործումն ու սխալ տեղակայումը ծովի աղտոտման հիմնական պատճառն է: Համոզեք ծնողներին, էկոակումբներին դադարեցնել պոլիէթիլենային տոպրակների կիրառումն ընտանիքում: Մտածեք և իրականացրեք համապատասխան արշավ:

- Իրականացնել գետերի և դրանց ավազանների մաքրման նախագիծ. ինչպես նշվեց 6-րդ («Մաքուր ջուր») նպատակում, դուք կարող եք ընկերների և ընտանիքի անդամների հետ ընդգրկվել տեղական գետի, լողափի կամ օվկիանոսի մաքրման աշխատանքներում: Դարձրեք այս միջոցառումն ավելի ճանաչելի՝ տարածելով այն Facebook- ում, որպեսզի ավելի շատ աջակցություն ստանաք այն մարդկանցից, ովքեր ցանկանում են օգնել:.

Յուրաքանչյուր միջոցառման համար շնորհվում է 30 «տնկի»:

«Տնկիները» ստանալու համար Forestry.ge- ում վերբեռնեք նախաձեռնության նկարագրությունը՝ ընթացքը լուսաբանող լուսանկարներով և նշեք «Կայուն զարգացման նպատակ» կատեգորիան:

ՆԻԿՈՂ ԿԵՑՈՒՄՆԵԼՈՒ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿ 2021 - ԿՐԹՈՒԹՅՈՒՆ՝ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ, ԷԿՈԱԿՈՒՄԲԻ ՈՐՊԵՍԶԻ



15 ԵՐԿՐԱԳՆԴԻ ԷԿՈՀԱՄԱԿԱԳԸ

Կենսաբազմազանություն նշանակում է Երկրի վրա գոյություն ունեցող կյանքի ձևերի (բույսեր, կենդանիներ և միկրոօրգանիզմներ), ինչպես նաև գեների և կենդանի օրգանիզմների կողմից առաջացած բարդ համակարգերի բազմություն:

Կենսաբազմազանություն տերմինը ենթադրում է Երկրի վրա կյանքի բազմազանություն:

Էկոհամակարգը հատուկ միջավայրի և կենդանի արարածների միասնություն է: Գոյություն ունեն մեծ քանակությամբ միմյանցից տարբերվող տեսակներ միևնույն Էկոհամակարգում և մեծ քանակությամբ միմյանցից տարբեր էկոհամակարգեր Երկրի վրա:

- Անտառներ. մոտ 1.6 միլիարդ մարդ կախում ունի անտառներից, որպես գոյության աղբյուր: Անտառներում են բնակվում ցամաքային կենդանիների, բույսերի և միջատների տեսակների ավելի քան 80% -ը: Անապատացում. 2.6 միլիարդ մարդ կախված է գյուղատնտեսությունից, սակայն գյուղատնտեսության համար օգտագործվող հողերի 52% -ի վրա հողի դեգրադացիան ունի միջին կամ ծանր ազդեցություն: Երաշտների և անապատացման պատճառով տարեկան կորչում է 12 միլիոն հա (րոպեում 23 հա), որի վրա հնարավոր կլիներ աճեցնել 20 միլիոն տոննա հացահատիկ: Համաշխարհային մասշտաբով հողերի դեգրադացիան ուղղակիորեն ազդում է աղքատ մարդկանց մոտ 74% -ի վրա:
- Կենսաբազմազանություն. Կենդանիների 8,300 հայտնի տեսակների 8% -ը վերացել է, իսկ 22% -ը ոչնչացման վտանգի տակ է: Ավելի քան 80,000 բույսի տեսակների 1% -ից պակասն է ուսումնասիրվել դրանց հնարավոր օգտագործման նպատակով:

ԻՆՉՈ՞Ւ Է ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԵՎՈՐ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ №15 ՆՊԱՏԱԿԻՆ ՀԱՍՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Որպեսզի տեղական և ազգային զարգացման գործընթացում հաշվի առնվեն Էկոհամակարգի և կենսաբազմազանության արժեքները, անհրաժեշտ է որակյալ կրթություն:

ԻՆՉԻ՞ ԵՆՔ ՈՒԶՈՒՄ ՀԱՍՆԵԼ

- Պահպանել **անտառներն ու լանդշաֆտները:**
- Խուսափել անհետացող **տեսակները ոչնչացնելուց:**
- Պահպանել **բերրի** հողը:
- Պաշտպանեք վայրի բնությունը և արմատախիլ անեք **որսագողությունը:**

Անտառները մեզ չեն պատկանում: Անտառները կազմում են կենդանիների, բույսերի և միջատների տեսակների ավելի քան 80% -ի գոյատևման միջավայրը: Ցամաքում կյանքը պահպանելու համար մեր պարտականությունն է հոգ տանել անտառների և այլ ցամաքային էկոհամակարգերի մասին:

ՈՒԶՈՒ՞Մ ԵՔ ՕՆԵԼ, ԱՀԱ, ԹԵ ԻՆՉՊԵՍ

- **Երկրի էկոհամակարգի պաշտպանության լոբինգի նպատակով միացեք քաղաքականություն ստեղծող խմբին.** Ձմասնակցեք Երկրի էկոհամակարգերի պաշտպանության գործին: Դուք կարող եք դա անել արշավների և կառավարության նկատմամբ խնդրագրերի պատրաստմամբ, տեղական համայնքում կրթական գործունեություն ծավալելով, նշված նպատակին աջակցող բանաձևերի կազմակերպմամբ և այլ գործունեության միջոցով: Սա կօգնի, որ կառավարության / կորպորացիաների մակարդակով սկսվի խնդրի քննարկումը:

- **Թափոնները տեղադրեք համապատասխան տեղում.** պարզապես թափոնները գցելով աղբարկղ, կնպաստեք հողի, անտառների և լանդշաֆտի մաքրության պահպանմանը, ինչը կպաշտպանի այդ էկոհամակարգը աղտոտվածությունից:

- **Ձեռնպահ մնացեք թունաքիմիկատների օգտագործումից.** հողի որակի պաշտպանության և պահպանման նպատակով բույսեր աճեցնելիս մի օգտագործեք քիմիական հավելումներ: Դա կնվազեցնի հողի աղտոտումը: Միշտ կարող եք օգտագործել բնական պարարտանյութեր:

- **Մի գնեք վաճառքի համար արգելված բույսեր կամ վայրի բնության տեսակներ.** դուք կարող եք կանխել անհետացող տեսակների ոչնչացումը, եթե ստուգեք աղբյուրը և չգնեք վաճառքի համար արգելված բույսեր և կենդանիներ:

ՆԻԿՈՒ ԿԵՑՈՒՄՆԵԼՈՒ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿ 2021 - ԿՐԹՈՒԹՅՈՒՆ՝ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ, ԷԿՈՀԱՄԱԿԱՐԳԻ ՈՐԵՑՈՒՅԹ

- **Մի գնեք մթերքներ, որոնք փորձարկված են կենդանիների վրա.** նախքան գնումը ստուգեք ապրանքի պիտակը: Համոզվեք, որ դրանք փորձած չեն կենդանիների վրա (հիմնականում դա վերաբերում է կոսմետիկ միջոցներին, սննդին, բժշկական ապրանքներին և այլն): Բացի այդ, համապատասխան ցանկը կարող եք տեսնել համացանցում: Եթե չգնենք նման ընկերություններից, որոնք իրենց արտադրանքը փորձրկում են կենդանիների վրա, դրանով կօգնենք պահպանել վայրի բնության բազմազանությունը և կվերացնենք կենդանիների նկատմամբ դաժան վերաբերմունքը:

- **Մի այցելեք այնպիսի հաստատություններ, որտեղ կենդանիներին դաժանորեն են վերաբերվում:** Հրաժարվեք կրկես գնալուց: Այցելեք միայն այն կենդանաբանական այգիները, որտեղ կենդանիներին լավ են խնամում և ստեղծում են բնական միջավայրին համապատասխան միջավայր:

- **Հրաժարվել մուշտակներից և կաշվե իրերից.** բնական մուշտակները և կաշվե իրերը փոխարինեք արհեստականով կամ այլ նյութերով՝ նորաձեւության արդյունաբերության մեջ կենդանիների նկատմամբ դաժան վերաբերմունքը կանխելու համար:

- **Ապաստան տվեք ընտանի կենդանիներին.** Եթե գնելու փոխարեն ընտանի կենդանուն ապաստան տաք, դուք կկարողանաք փրկել կյանք:

- **Հրաժարվեք տոնածառ գնելուց.** համոզեք ծնողներին, իրական ծառը փոխարինել պլաստմասե ծառով և տարեցտարի կրկին օգտագործեք: Այդպիսով կպահպանվի և տոնական ոգին և ծառերը:

ՈՐՊԵՍԶԻ ԷԿՈԱԿՈՒՄԲԻ ՀԱՄԱՐ «ՏՆԿԻՆԵՐ» ՀԱՎԱՔԵՔ».

- **Ծառ տնկել.** նպատակ դրեք ձեր մոտակայքում, դպրոցի պարտեզում կամ անտառում տարեկան առնվազն մեկ ծառ տնկել էկո-ակումբի յուրաքանչյուր անդամի անունով: Այս միջոցառումը կարող եք մարդկանց համար հայտնի դարձնել սոցիալական ցանցերում որպես մարտահրավեր, կամ պարզապես կիսվեք ընկերների հետ՝ որպեսզի միանան այս գաղափարին: Մի մոռացեք օգնություն խնդրել անտառապահներից տնկիների, տնկման վայրի և ժամանակի ճիշտ ընտրություն կատարելու համար:

- **Մաքրեք տեղական այգիներն ու անտառները.** կազմակերպեք կամ միացեք մաքրման արշավին: Իրականում դա ավելի հեշտ է, քան թվում է. վերցրեք աղբի համար նախատեսած պարկը և այնտեղ հավաքեք ցանկացած տեսակի թափոն, ինչ կտեսնեք: Նույնիսկ մեկ աղբապարկ լցնելով արդեն դրական փոփոխություն կիրականացնեք:

ՆԻՒՈՒ ԿԵՑՈՒՄՎԵԼՈՒ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՄՐՑՈՒՆԱԿ 2021 - ԿՐԹՈՒԹՅՈՒՆ՝ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ, ԷԿՈԱԿՈՒՄԲԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

- **Թուղթը վերամշակել.** դուք կարող եք ծառեր փրկել քիչ թուղթ օգտագործելով և այն վերամշակելով: Հավաքեք այն թուղթը, որը, ձեզ հարկավոր չէ, առանձին աղբարկղի մեջ և հանձնեք վերամշակող ձեռնարկություն:

- **Դարձեք կամավոր՝ փողոցային կենդանիների պաշտպանության կազմակերպություններում և ապաստարաններում.** արտահայտեք ձեր պատրաստակամությունը կամավոր ներգրավվելու այն կազմակերպություններում, որոնք օգնում են թե՛ ընտանի, և թե՛ վերացման վտանգի տակ գտնվող կենդանիներին: Դրանով դուք կօգնեք բազմազանությունը պահպանելուն և կկարողանաք փրկել կենդանիների կյանքը:

- **Ուսումնասիրեք ձեր շրջապատի բնությունը:** Յուրաքանչյուրը ճիշտ որոշած տեսակի համար 2 «տնկի» կստանաք. Լրացուցիչ հրահանգներ կտեսնեք վերջին գլխում:

- **Սկսեք արշավ որսագողության դեմ:** Որսագողությունը մեծ վտանգ է բնության համար: Երիտասարդության հերթն է պատասխանել այս մարտահրավերին և թույլ չտալ շարունակել: Ի՞նչ կարող ես անել: Առաջին հերթին, եթե որսագողության փաստը ձեզ հայտնի է դարձել, գրեք մեզ, կամ հաղորդագրություն ուղարկեք բնապահպանական վերահսկողության թեժ գծին (153): Որսագողության կանխարգելման համար պակաս կարևոր չէ տեղեկացվածության բարձրացումը ինչպես երիտասարդ, այնպես էլ ավագ սերնդի մոտ:

- **Ծանոթացեք ազգային և միջազգային կարմիր ցուցակին:** Ո՞ր բույսերն ու կենդանիներն են նշված «Ազգային կարմիր ցուցակում»: Սովորեք և կիսվեք տեղեկատվությամբ հասակակիցներիդ հետ սեմինարի, ինֆոգրաֆիկ կամ այլ տեսքով:

- **Ինքներդ բազմապատկեք կարմիր ցուցակից կամ ձեզ հետաքրքրող այլ տեսակներ:** Բույսերի բազմացումը, ապա դրանք բաց հող տեղափոխելը շատ զվարճալի և հաճելի զբաղմունք է: Մտածեք այդ մասին, միգուցե էկոակումբի անդամներդ էլ կարողանաք կազմակերպել փոքրիկ ապակյա տնկարան տանը կամ դպրոցում:

Յուրաքանչյուր միջոցառման համար շնորհվում է 30 «տնկի»:

«Տնկիները» ստանալու համար Forestry.ge- ում վերբեռնեք նախաձեռնության նկարագրությունը՝ ընթացքը լուսաբանող լուսանկարներով և նշեք «Կայուն զարգացման նպատակ» կատեգորիան:

ՆԻԿՈ ԿԵՑՈՒՎԵԼՈՒ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿ 2021 - ԿՐԹՈՒԹՅՈՒՆ՝ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ, ԷԿՈԱԿՈՒՄԲԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ



16

ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ, ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԶՈՐ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐ

Խաղաղություն նշանակում է հակամարտության նվազում և բռնության բացակայություն տարասեռ սոցիալական խմբերի միջև: Արդարադատությունը միավորում է երկու ասպեկտ. գաղափար՝ յուրաքանչյուրին տալ այն, ինչն ստանալու իրավունքն ունեն, և մարդկանց խումբ, որոնք ներկայացնում են դատավորների, փաստաբանների, արդարադատության նախարարների և դատարանների:

Կաշառակերությունը, գողությունը և հարկերից խուսափելը զարգացող երկրների վրա տարեկան նստում է 1,26 տրիլիոն ԱՄՆ դոլար: Այս գումարի չափը բավական կլիներ, որ մարդիկ առնվազն 6 տարով դուրս գային աղքատությունից: Հակամարտությունից տուժած երկրներում տարրական դպրոցը լքող երեխաների թիվը 2011-ին այն հասել է 50% -ի, ինչը հավասար է 28,5 մլն երեխայի և ցույց է տալիս անկայուն հասարակության և կրթության արդյունքներ:

ԻՆՉՈ՞Ի Է ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԵՎՈՐ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ №16 ՆՊԱՏԱԿԻՆ ՀԱՄՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Կրթված հանրությունը խորհրդատվության հնարավորությամբ է ապահովում իր քաղաքացիներին և համոզվում, որ կառավարությունը որոշումներ է կայացնում՝ հաշվի առնելով երեխաների և չափահասների շահերը: Օրինակ, անհրաժեշտ է խորհրդակցել երեխաների և երիտասարդների հետ նախքան այնպիսի իրավական օրենք ստորագրելը, որը կազդի նրանց կյանքի վրա:

ԻՆՉԻ՞ ԵՍ ՈՒԶՈՒՄ ՀԱՄՆԵԼ

- Կրճատել **բռնությունը:**
- Վերացնել երեխաների նկատմամբ բռնությունը և երեխաների խոշտանգումները:
- **Իրավաբանական ծառայությունները պետք է հասանելի լինեն բոլորին:**
- Նվազեցնել կաշառակերությունը:
- Յուրաքանչյուրին մատչելի լինի հիմնարար իրավունքների և դրանց պաշտպանման մասին տեղեկատվությունը:
- **Ներառական և ներկայացուցչական** որոշում կայացնելու գործընթաց բոլոր մակարդակներում:

Ըստ ՄԱԿ-ի, թեև աշխարհի բնակչության գրեթե կեսը 30 տարեկանից ցածր տարիքի մարդիկ են, երիտասարդները չեն գտնվում քաղաքական որոշումների կայացման էպիկենտրոնում:

Մենք՝ երիտասարդներս, իրավունք ունենք բարձրացնելու մեր ձայնը՝ պաշտպանելու այն, ինչին հավատում ենք և մեր ձայները պետք է ներկայացվի պետական մարմիններին: Սակայն, 21-րդ դարում, ողջ աշխարհում դարձյալ տեղի են ունենում բախումներ, որոնք հարկադրում են հակամարտություններից տուժած երկրների տարրական դասարանների աշակերտներին թողնել դպրոցը: Հակամարտությունները հանգեցնում են նաև աղքատության աճի և ենթակառուցվածքի ոչնչացման:

Ի՞ՆՉ ԱՆԵԼ ԱՅԴ ՆՊԱՏԱԿԻՆ ՀԱՄՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

- **Մասնակցեք ընտրություններին:** Օգտագործեք ձեր քվեարկության իրավունքից, այս կամ այն գաղափարին աջակցություն հայտնելու համար: Լսեկի դարձրու քո ձայնը տարբեր գործակալություններում: Որոշումներ կայացնում են նրանք, ովքեր մասնակցում են ընտրություններին:

- **Առաջադրեք ձեր թեկնածությունը ընտրություններին.** Ցեթե նախորդ գործողությունը ձեզ համար բավական չի լինի, եթե ցանկություն ունեք ներկայացնել երիտասարդությունը պաշտոնական որոշումներ կայացնելու գործընթացում, դուք միշտ կարող եք ներկայացնել Ձեր թեկնածությունը ընտրություններին: Աշխարհում դրա բազմաթիվ ոգեշնչող օրինակներ կան:

ՆԻԿՈ ԿԵՑԽՈՎԵԼՈՒ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿ 2021 - ԿՐԹՈՒԹՅՈՒՆ՝ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ, ԷԿՈԱԿՈՒՄԲԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

- **Տեղյակ եղեք վերջին նորություններին՝** հանրությունում գոյություն ունեցող իրադարձությունների մասին տեղեկություն ունենալը կօգնի քեզ տեղյակ լինել վերահաս հակամարտությունների, նշանակալի կառավարական որոշումների կարգավիճակի և ընդունված նոր օրենքների մասին, որոնք, հնարավոր է, ազդեն ձեզ վրա: Տեղեկատվությանը հասու լինելը արտոնություն է և ուժ, որը կարող եք օգտագործել և այն պետք է կիսեք ձեր հասակակիցների հետ՝ որպեսզի կարողանաք ինքնուրույն որոշումներ կայացնել:

- **Նշեք կաշառակերության դեպքերը և կաշառք մի տվեք.** անկախ նրանից, թե դուք դեռահաս եք, ուսանող կամ երիտասարդ մասնագետ, տարբեր կազմակերպություններում (դպրոց, հիվանդանոց, վարորդական դասընթացներ) կարող է հանդիպեք կաշառք տալու փորձի: Գիտակցված որոշում կայացրեք, չաջակցեք նման վարքին նույնիսկ այն ժամանակ,երբ կաշառք տալն առաջին հայացքից ավելի հեշտ է թվում, քան սովորելը կամ աշխատելը: Եթե կաշառք տալու կամ վերցնելու փորձին մասնակցում են Ձեր ընտանիքի անդամները, ընկերները կամ գործընկերները, պաշտպանեք ձեր կզբունքները և բացահայտեք նրանց:

ՈՐՊԵՍԶԻ ԷԿՈԱԿՈՒՄԲԻ ՀԱՄԱՐ «ՏՆԿԻՆԵՐ» ՀԱՎԱՔԵՔ».

- Կրթեք ինքներդ ձեզ և ձեր ընկերներին ձեր իրավունքների և պարտականությունների մասին. իմացեք ձեր իրավունքները,որպեսզի պաշտպանվեք, եթե դրանց վտանգ սպառնա: Օգնեք ուրիշներին սովորել իրենց իրավունքները: Դրանով դուք կարող եք պաշտպանել երեխաներին այնպիսի իրավիճակներում հայտնվելուց, որտեղ նրանց կարող են շահագործել կամ դաժան վերաբերվել:

- Անցկացրեք հակամարտությունների կարգավորման սեմինարներ ձեր համայնքում. հրավիրեք ուսուցիչներին և հասակակիցներին (կամ գործընկերներին): Սեմինարը պետք է ղեկավարի պրոֆեսիոնալը: Դա կարող է դառնալ հարթակ, որտեղ դուք և ձեր ընկերները նոր գիտելիքներ կստանաք հակամարտության բռնի լուծումից խուսափելու, կարեկցանքի և հուզական ինտելեկտի վերաբերյալ:

- Մասնակցեք տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների և մարգինալացված խմբերի հանդիպումներին. դրանով կարող եք, նպաստել որոշումների կայացման գործընթացին՝ որպես երիտասարդ սերնդի ներկայացուցիչ ձեր ձայնը հասցնելով հասցեատիրոջը: Աշխարհում պատգամավորների միայն 2%-ն է 30 տարեկանից ցածր: Ուստի, երիտասարդները ոչ բավարար ներկայացված խումբ են, ինչի պատճառով ձեր իրավունքների վերաբերյալ հայտարարությունն ու պաշտպանությունը պահանջում են լրացուցիչ ջանք:

ՆԻՒՅՈՐՔԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿԻ 2021 - ԿՐԹՈՒԹՅՈՒՆ՝ԿԱՅՈՒՆ ՇԱՐԺԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ, ԷԿՈԱԿՈՒՄԲԻ ՈՐՊԵՍԶԻ

- Հայցեք և վերլուծեք հանրային տեղեկատվություն[13] ձեր քաղաքում, գյուղում ընթացող նախագծերի մասին, որոնք տեղական բնակչության վրա կարող են ունենալ դրական կամ բացասական ազդեցություն:

Յուրաքանչյուր միջոցառման համար շնորհվում է 20 «տնկի»:

«Տնկիները» ստանալու համար Forestry.ge- ում վերբեռնեք նախաձեռնության նկարագրությունը՝ ընթացքը լուսաբանող լուսանկարներով և նշեք «Կայուն զարգացման նպատակ» կատեգորիան:

ՆԻԿՈՂ ԿԵՑՈՒՄՎԵԼՈՒ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿ 2021 - ԿՐԹՈՒԹՅՈՒՆ՝ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ, ԷԿՈԱԿՈՒՄԲԻ ՈՐԵՑՈՒՑԱ

[13] «Հանրային տեղեկատվություն - պաշտոնական փաստաթուղթ (ընդ որում՝ գծագիր, մակետ, պլան, սխեմա, լուսանկար, էլեկտրոնային տեղեկատվություն, տեսանյութ, աուդիո ձայնագրություններ), այսինքն՝ պետական հիմնարկում պաշտպանված, ինչպես նաև պետական հիմնարկի կամ աշխատողի կողմից ծառայողական գործունեության շրջանակներում ստացած, մշակած, ստեղծած կամ ուղարկած տեղեկատվություն, ինչպես նաև պետական հիմնարկի կողմից հրապարակած տեղեկատվություն:

17

ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ՝ ՆՊԱՏԱԿՆԵՐԻՆ ՀԱՍՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Գործընկերությունը համակարգ է, որի շրջանակներում կողմերը համաձայնում են համագործակցել՝ փոխադարձ շահերից ելնելով գործելու համար: Միջազգային զարգացման աջակցությունը 2014 թվականին ամենաբարձր ցուցանիշն է գրանցել՝ 135.2 միլիարդ դոլար: Զարգացող երկրների կողմից իրականացվող ներմուծման 79% -ը զարգացված երկրներ է մտնում առանց մաքսային վճարի: Պարտքի մեծությունը զարգացող երկրների համար անփոփոխ է և կազմում է արտահանման եկամուտների մոտ 3%-ը:

Վերջին 4 տարվա ընթացքում Աֆրիկայում համացանց օգտագործողների թիվը գրեթե կրկնապատկվեց: Համաշխարհային երիտասարդության 30% -ը առնվազն հինգ տարի է, ինչ օգտվում է առցանց ակտիվ կարգավիճակից, սակայն, ավելի քան 4 միլիարդ մարդ համացանց չի օգտագործում և դրանց 90% -ը ապրում է զարգացող երկրներում:

ԻՆՉՈ՞Ի Է ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԵՎՈՐ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ №17 ՆՊԱՏԱԿԻՆ ՀԱՄՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Որակյալ կրթությունը թույլ է տալիս համագործակցել այնպիսի կազմակերպությունների և անհատների հետ, որոնք աշխատում են գլոբալ նպատակների հետ կապված տարբեր հարցերի վրա: Միջազգային աջակցությունը զարգացող երկրներում խթանում է արդյունավետ կարողությունների հզորացում: Սա թույլ է տալիս նրանց կայուն զարգացման նպատակներից յուրաքանչյուրի իրականացման նպատակով աջակցել ազգային ծրագրին:

ԻՆՐԻ՞ ԵՆՔ ՈՒԶՈՒՄ ՀԱՄՆԵԼ

- Զարգացող երկրների համար մոբիլիզացնել **ֆինանսական ռեսուրսները:**
- Բարձրացնել **տեխնոլոգիաների և նորարարության** հետ կապված հնարավորությունները զարգացող երկրներում:
- **Բարձրացնել հնարավորությունները, որոնք անհրաժեշտ են զարգացող երկրներում կայուն զարգացման նպատակներն իրականացնելուն:**
- Բարձրացնել արտահանման ծավալը զարգացող երկրներից:
- **Տվյալների մոնիտորինգ և գնահատել առաջընթացը:**

Անհնար է, որ այս գործընթացում հաղթի անհատը, ընկերությունը կամ կառավարությունը: Նպատակին հասնելու համար պատասխանատվություն պետք է կրեն բոլորը: Բոլոր ոլորտները և ամբողջ բնակչությունը պետք է համագործակցի:

ԻՆՉՊԵ՞Ս ԱՊԱՀՈՎԵԼ ԲՈԼՈՐ ԿՈՂՄԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻՆ ՀԱՑՆԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ

- **Կառավարությունից և ընկերություններից պահանջել հաշվետու լինել.** Ծանոթացեք իշխանության կողմից կայուն զարգացման նպատակների իրականացման պլանին և օգտվեք քաղաքացու իրավունքից (քվեարկություն, աշխատանքային խմբեր, քաղաքացիական հասարակության անդամակցություն կազմակերպությանը), որպեսզի կառավարությունից պահանջեք տվյալ պլանի հաշվետվությունը: Կարող եք օգտագործել սպառողի իրավունքը և ազդել ձեռնարկությունների վրա, որպեսզի իրականացնեն կայուն պրակտիկա: Դա իրականացնելու համար մի մարդու ջանքը գուցե բավարար չէ, սակայն, որպեսզի նկատվեք, կարող եք շարժում սկսել ձեր համայնքում:

  Մեզանից յուրաքանչյուրի պարտքն է ստանձնել պատասխանատվություն, և հասնել նշված նպատակին, որը միայն մեր կյանքը չի բարելավելու:

ՆԻԿՈ ԿԵՑԽՈՎԵԼՈՒ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿ 2021 - ԿՐԹՈՒԹՅՈՒՆ՝ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ, ԷԿՈԱԿՈՒՄԲԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՈՐՊԵՍԶԻ ԷԿՈԱԿՈՒՄԲԻ ՀԱՄԱՐ «ՏՆԿԻՆԵՐ» ՀԱՎԱՔԵՔ».

- **Աշխատել կամ կամավորագրվել այն կազմակերպությունում, որոնց գործունեության ոլորտը վերաբերում է կայուն զարգացման նպատակներին.** տարբեր հասարակական կազմակերպություններում կամավոր աշխատանքով կարող եք օգնել ձեր երկրին կայուն զարգանացման նպատակներին հասնելու գործում:

- **Կյուն զարգացման նպատակների հետ կապված նախագծերին օգնեք ֆինանսական ռեսուրսներ որոնելիս.** դուք կարող եք ուղղակիորեն աջակցել նախագծին սեփական ռեսուրսներով կամ սկսել արշավ՝ կայուն զարգացման նպատակներին հասնելուն կողմնորոշված նախաձեռնություններին աջակցելու նպատակով:

Յուրաքանչյուր միջոցառման համար շնորհվում է 30 «տնկի»:

«Տնկիները» ստանալու համար Forestry.ge- ում վերբեռնեք նախաձեռնության նկարագրությունը՝ ընթացքը լուսաբանող լուսանկարներով և նշեք «Կայուն զարգացման նպատակ» կատեգորիան:

ՆԻՒՍ ԿԵՑՈՒՄՎԵԼՈՒ ԴՈՐՈՑԱԿԱՆ ՄՐՑՈՒՆՄԱ 2021 - ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ, ԷԿՈԱԿՈՒՄԲԻ ՈՐՊԵՍԶԻ

ԻՆՉ ՎԵՐԲԵՌՆԵԼ ՊՈՐՏԱԼ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐԻ ՀԵՏ ՄԻԱՍԻՆ

	Ակտիվության տիպը	**Հաստատող նյութերի ցուցակ (Ինչ կարող եք կցել պորտալ վերբեռնած ակտիվության նկարագրության ցուցակին)**
1	Առցանց կամ ֆիզիկական միջավայրում անցկացրած սեմինար / հանդիպում / թրեյնինգ / թեմատիկ դաս	Հանդիպման գրառումը, մանրամասն նկարագրություն, օրակարգ՝ թեմաների թվարկմամբ, լուսանկարներ, սքրինշոթեր:
2	հետազոտություն	Հետազոտության թեմայի համառոտ նկարագրություն, Հետազոտության գործիք՝ հարցաշար, Հետազոտության հաշվետվության ֆայլ, Հետազոտություն գործընթացի լուսանկարներ:
3	Առցանց արշավ	Արշավի հղումներ և հեշթեգեր
4	Խնդրագիր	Խնդրագրի ֆայլը կամ հղումը, Տեղեկատվություն այն մասին, թե ինչպես և ինչ ձևով ներկայացրիք խնդրագիրն հասցեատիրոջը:
5	Ակցիա, միջոցառում, կամավորություն, փառատոն և այլն... Ֆիզիկական միջավայրում	Աշխատանքային գործընթացը ներկայացնող լուսանկարների և / կամ տեսանյութերի հղում: **Լուսանկարներ ուղարկելիս համոզվեք, որ ունեք լուսանկարում պատկերված մարդու կամ նրա խնամակալի համաձայնությունը: Այս կանոնը չպահպանել չի թույլատրվում:**
6	Բլոգ /տեսաբլոգ	Բլոգի / տեսաբլոգի հղում, որտեղ հրապարակված է առնվազն 5 լիարժեք բլոգի գրառում (լուսանկարներով և հստակ տեքստերով): Տեսաբլոգի դեպքում՝ 5 տեսանյութի գրառում:

ՆԻՒԹԵՐԸ ՊԱՏՐԱՍՏՎԵԼ ԵՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԱՄԱՐ, ԵՒ ԱՐՏԱՀԱՅՏՎԱԾ ԿԱՐԾԻՔՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՉԻ ՆՇԱՆԱԿՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁԻՆ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ՄԱՐՄՆԻ ՏԵՍԱԿԵՏԻ ՏԵՍԱԿԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ

7	Հոդված, հոդվածների ցիկլ	WORD ձևաչափով վերբեռնած տեքստ. տեքստը պետք է լինի հեղինակի կազմած բնօրինակը: Դուք կարող եք և կարևոր է այդ տեղեկատվությունը ձեռք բերել տարբեր տպագիր և թվային աղբյուրներից: Թարգմանեք, կատարեք վերաձևակերպում, ցույց տվեք մեզ Ձեր անհատական տեսլականը և չմոռանաք նշել աղբյուրը / աղբյուրները:
8	**Բնություն իմ շուրջը՝** ուրաքանչյուր ճիշտ գուշակված/ ճանաչված տեսակ գնահատվում է 2 տնկիով:	• Ուղարկե՛ք մեզ կենսաբազմազանության այն ներկայացուցիչների լուսանկարը, որոնց դուք շրջապատում կտեսնեք: • Գտեք նրա հայերեն/վրացերեն կամ լատիներեն անվանումը: **(Այստեղ պետք է ներգրավվեն միայն աշակերտները և ոչ թե ուսուցիչները: Ուսուցիչը կարող է պարզապես օգնել էկոակումբի նդամներին ձեռք բերել տեղեկատվություն):** • Տեղեկացրեք մեզ, թե ինչ հատկություններ ունի և ինչ վարքագիծ է բնութագրում (առնվազն 100 բառ): • Մրցույթի մեկնարկից առաջ նկարած լուսանկարները չեն ընդունվում: • Խնդրում ենք ի նկատի ունենալ, որ • պտղատու ծառերի և ընտանի կենդանիների, գերեվարված տեսակների լուսանկարներ չեն ընդունվում:. **Խնդրում ենք, լուսանկարելիս կենդանիների համար չստեղծեք տհաճ իրավիճակ, մի բռնեք ստիպողաբար: Դա կատեգորիկ կերպով դեմ է մրցույթի արժեքներին: Շնորհակալություն, որ դա հաշվի եք առնում:**

ՆԻՒՍ ԿԵՑՈՒՄՎԵԼՈՒ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿ 2021 - ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ԳԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄՄԱՐ, ԷԿՈԱԿՈՒՄԲԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Ի ՆԿԱՏԻ ՈՒՆԵՑԵՔ, ՈՐ.

- **Մի ակտիվությունը գնահատվում է մեկ անգամ,** նույնիսկ եթե այն միաժամանակ կապված է կայուն զարգացման մի քանի նպատակների հետ: Եթե միջոցառումները կրում են քարոզչական և ծրագրային բնույթ, այդ դեպքում յուրաքանչյուր կրկնվող ակտիվություն գնահատվում է առանձին:

- **Նիկո Կեցխովելու մրցանակի** շրջանակներում Էկոակումբները կարող են համագործակցել այն միջազգային, ազգային կամ տեղական նախաձեռնությունների հետ, որոնք զուգահեռաբար իրականացվում են տարբեր կազմակերպության կողմից: Այնուամենայնիվ, վերը նշվածից, միավորներով կգնահատվեն միայն այն միջոցառումները, որոնք իրականացվել են Նիկոյ Կեցխովելու մրցանակի անունից: Նիկո Կեցխովելու անվան մրցանակի անվան միջոցառման իրականացում նշանակում է, որ գործընկեր կազմակերպությանը տեղեկատվություն է տրամադրվել մրցույթի վերաբերյալ և էկոակումբի կողմից վերբեռնած նյութը պարունակում է տեքստային, փաստաթղթային կամ զննական հիմնավորում: Հաճախ լավագույն լուծում է մրցակցային խորհրդանիշների ստեղծումն ու օգտագործումը՝ Էկոակումբի խորհրդանիշը կամ կարգախոսը, որտեղ նշվում է նաև մրցույթի անվանումը:

- Մրցույթը նաև պահպանում է երկու կամ ավելի դպրոցների համատեղ նախաձեռնությունը խթանող կանոններ: Մասնավորապես, կոալիցիոն նախաձեռնությունների ժամանակ ՝ «տնկիները» չեն բաժանվում մասնակից դպրոցների քանակին և յուրաքանչյուր դպրոցին տրվում է անկախ գնահատում: Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ գնահատումը տրվում է ակտիվ թիմին՝ էկոակումբիի կողմից պլանավորած և իրականացված միջոցառման համար և չի գնահատվում պասիվ ներկայությունը ուրիշի պլանավորած միջոցառմանը:

- Ուժի մեջ է մնում համագործակցության աջակցությունը դպրոցից դուրս՝ հանրային, մասնավոր և այլ համայնքային կազմակերպությունների հետ: Եթե էկոակումբը մասնակցում է հանրային քննարկումների և տեղական ընթացիկ տարբեր նախաձեռնություններում, գնահատվում է միայն ակտիվ ներգրավվածությունը՝ համակազմակերպում, հարցի նախաձեռնում, խնդիրների լուծում, փաստաբանություն, փոփոխության առաջարկ և այլն:

ՆԻԿՈ ԿԵՑԽՈՎԵԼՈՒ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿ 2021 - ԿՐԹՈՒԹՅՈՒՆ՝ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ, ԷԿՈԱԿՈՒՄԲԻ ՈՐԵՑՈՒՅԹ
ՆԻԿՈ ԿԵՑԽՈՎԵԼՈՒ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿ 2021 - [illegible]

ՄՐՑՈՒՅԹՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՂՆԵՐԻ ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ

1.	Մայա	Կոդուա	Սամեգրելո, Վերին Սվանեթի, Աբխազիա	maia.kodua@cenn.org	599 15 40 96
2.	Իրակլի	Միքելաձե	Աջարիա, Գուրիա	irakli.mikeladze@cenn.org	595 70 20 06
3.	Նանա	Սոխաձե	Ռաճա-Լեչխումի և Ստորին Սվանեթի	nana.soxadze@yahoo.com	551 58 62 07
4.	Թամար	Կապանաձե	Սամցխե-Ջավախեթի	tamuna.kapanadze78@gmail.com	555 88 38 83
5.	Գիորգի	Իորամաշվիլի	Մցխեթա-Մթիանեթի	giorgi.ioramashvili@cenn.org	595 13 13 46
6.	Մայա	Կեզևաձե	Իմերեթի	kezevadzemaia@gmail.com	595 50 16 51
7.	Գիորգի	Դեմուրաշվիլի	Ստորին Քարթլի	kkpic.bolnisi@gmail.com	599 21 92 11
8.	Կախա	Սուխիտաշվիլի	Կախեթի	kakha.sukhitashvili@cenn.org	597 28 28 15
9.	Մարիկո	Ծիքորիձե	Ներքին Քարթլի	mariko.tsikoridze@cenn.org	599 63 04 24
10.	Վանո	Գիոշվիլի	Թբիլիսի	vano.gioshvili@cenn.org	597 97 96 06


forestry.ge